

94

13

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏԸՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏԸ

ԹՈՌԻՑԻԿ ԱԿՆԱՐԿ ՄԸ

ՀՕՅ ԱԶԳԻՆ ԿՈՒԻՆԵՐՈՒԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԱԳՐԵՑ

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՅ

Հ. Գ. Ն.




ՎԵՆԵՏԻԿ - Ս. ՂԱԶԱՐ

ՕՑԿԵ - 1919

ARMENIAN GARO LIBRARY
366 THIRD AVENUE
NEW YORK

ARMENIAN GARO LIBRARY
367 WASHINGTON ST.
BOSTON MASS.
HARRY G. BERBERIAN



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի արհաւիրքներու երկունքը :

Ինեկտաներու դաշու վերջին
բագողոցին, բարչը թուրքի մէջ մար-
մացած անիրաւութիւնը, գտաւիր նեցուկն
և պաշտպանն յանձին գերման կայսեր :
Կարմիր Սուլթանն զժոխային ժպիտով սեղ-
եց բարեկամի ձեռքն, և կնքեցին պայ-
սն մը բնաջնջման Հայ ազգին : Գուլիէլ-
մոս թ. գուցէ աւելի հայատեաց էր քան
զԱպտիւլ Համբատ. սա աւելի վայրագ և
խորամանկ՝ երկուրն ևս տարբեր գաղա-
փարներով նոյն նպատակին կը դիմէին .
երկուրքի շահերն կը պահանջէին միան-

13



)- 20 Յ Օահ-

գամ ընդ միշտ վերջ տալ արևելեան հարցին՝ փոքր ազգերու բնաջնջումով, որովհետեւ արգելք էին մեծերու առաւելագոյն զարգացման և համաշխարհի տիրապետութեան։ Կայսրն իւր տիեզերակալութեան ծրագրի մէջ անցուցեր էր զայն և զերման պատմիչներն ընդգծած էին անոր անհրաժեշտութիւնն։ Իսկ կարմիր Առւթանն իւր համիսլամական յուշատեսրի մէջ նկարել էր Հայաստանն արիւնով ներկուած։ Առաջինը ծրագրել էր մաքրել զՀայաստանն, որովհետեւ չէր կամենար որ ժիր, խելացի, տոկուն և աշխատաէր Հայ տարրն, նախանձորդ և մրցակից դառնայ գերման գաղութական տարածման յառաջաւոր Ուսի՛ց՝ մէջ։ Իսկ երկրորդն կը հասնէր իւր նպատակին՝ ջնջելով զբրիստոնեայ տարրն՝ մանաւանդ զՀայն՝ վախելով որ զարգացման և յառաջադիմութեան սիրահար և պատերազմող հայն, կարող է ոչ միայն իւր ազատութիւնն և անկախութիւնն՝ իւր զէնքով և արիւնով ձեռք բերել, այլ նաև պատճառ դառնալ ազատութեան սիրով զրգուելու և խմորելու միւս բնած կամ կիսարթուն ցեղերն, ուրոնք նոյնպէս կը հեծէին դարերով թուրք

ւծի տակ։ Քանիցս կարմիր Առւթանն, Երլուզի բարձունքէն՝ հեռաւոր մութ հորիզոններու մէջ ուզեց երեակայել Թէս-Մարոբէն սկսեալ մինչև Ուրալ լեռներն, և վոսփորի ափերէն մինչև Գանգէսի ականակիտ ջրերն՝ կազմուելիք 300 միլիոն միատարր Համիսլամական մի մեծ պետութիւն։

Այս ի Համազգեաց լծուած համաձայնութեան աղբիւրն և սկիզբն եղաւ Պեռլինի, ոչ բարով, Դաշնագրի 61դ յօդուածն։ Հայաստանի աղէտից գուռն բացացաւ Հայոց ձեռքը, ըստ բնորոշ բացատրութեան Խրիմեան Հայրիկին, զրուեցաւ րդրէ տարգալ մը, որով ամեն ատեն երբ Հայոց հարցն Եւրոպական բաղացականութեան պուտուկի մէջ կը սկսէր եռաւ, կը զարնէր Հայ ազգն՝ իւր պատառն հանելու, տարգալն կը ծալլուէր և դատարկ գուրս կու գար. մինչ հզօր ազգեր, լիապէս կ'օգտուէին և կը շահագործէին բարասրութեամբ՝ անզէն ազգի մը թշուառութիւնն։ Հարկ էր Առւթանէն շնորհ մը խնդրելու. կը փսփսային ականջէն. Մենք Հայկական հարցին ականջ չենք կախեր։ Հարկ էր բռնի պատառ մը կորզել՝ 61դ յօդուածի

պաճուճապատանքն հանդիսով կանանչ սեղանի վրայ կը համուէր. Պիղատոս և Հերովդէս կը բարեկամանային, իսկ Հայոց առջև կը բացուէր Գողգոթայի հանապարհն։ Սուլթանն անպատիծ չէր թողուր Հայութիւն բաւացի բողոքն, այլ իրեւ յանցաւոր ըմբոստ և խոռվարակ՝ խաշերու և կախաղաններու կ'առաջնորդուէին իրաւունք և արդարութիւն աղերսողներն. իսկ ժողովուրդն առ հասարակ իրեւ ոչխար ի սպանդանոց կը քշուէր։ Սուլթանի հայրախնամ կառավարութիւնն էր այս, ուրով բարեկարգութիւն կը մտնէր ի Հայաստան, երկիրը շինութեան և խաղաղութեան կը դառնար. Խաղութիւն և շինութիւն էին ծխացող աւերակներն, և հայութիւնով ներկուած անապատներն։

Մի ոմն ասեր է, «քաղաքագիտութիւնն ոչ սէր զիտէ ոչ ատելութիւն, այլ միայն շահ»։ Իրաւ է այս բանն թէ ոչ, չփետեմ. սակայն իրականութիւնն այս է մեզի նկատմամբ. կը սիրէ՞ր զմեզ Եւրոպան, ոչ. կ'ատէ՞ր զմեզ Եւրոպան, ոչ։ Եթէսիրէր, նախ Ս. Ստեֆանոյի 16դ յօդուածն չէր փոխուեր. երկրորդ Պեռլինի 61դ յօդուածի կատարումն թերի չէր մնար. Զէր

ալ ատեր, վասն զի «մարդասիրաբար» երբեմն երբեմն թեթև կերպով Սուլթանի ականջէն կը քաշէր. բայց դէպ իրեն մերձեցնելով։ Ահա այն շահը, որուն մենք գոգ քառասուն տարի զոհ գնացինք, յուսաւով այդ ջախջախ եղէզին։

Բայց քաղաքագիտութիւնն և դիւանագիտութիւնն՝ չորեցկերպեան կայսրութեանց Գերմանիոյ, Աւստրիոյ, Ռուսիոյ և Թուրքիոյ իմաստութեան յենակէտն, բռնակալութիւնն ուժեղացնելով դէպի իրենց օրհասին կը մօտենային։ Իսկ ընդհակառակնանոնց հպատակ ճնշեալ, հարստահարեալ, հալածուած ու կեղեքուած մանր ազգութեանց մէջ՝ երթալով կը զօրանար ինքնաճանաչութեան զգացումն, իրաւունքի և արդարութեան ծարան, բնատուր ազտութեան գաղափարն։ Հայն առաջաւոր Ասիոյ փոքրիկ ազգերու մէջ, ամենքից աւելի աննպաստ պայմաններու մէջ կը գտնուէր զարերէ ի վեր. երեքի բաժնուածերեք աննման լեզուով, բարոյքով և զարգացմամբ տէրութեանց միջև, ոչ երեք լքաւ, ոչ հրաժարեցաւ ազգային միութեան գաղափարէն, ոչ մի ազատ և անկախ հայրենիքի տենչանցէն։ Ոչ մի բըռ-

Նաւորի առաջ խոնարհեցաւ, այլ կոռւեցաւ մինչև վերջի շունչն, նախամեծար համարնելով փշրուիլ, բան անարդ գերութեան լուծն անբաններու պէս անմոռնչ բարշել:

Իւր սարերն, ձորերն ու դաշտերն ամեն կարմիր են քրտնել, կարմիր խըմել են.

Հայ ցեղի անընկնելի նկարագիրն:

Գեղեցիկ Հայաստանն երբեմ ուռճաւաղարթ ծառի պէս, տարածեր էր իւր բազուկներն, զարդարուած ծաղիկներով և ծանրացած պտուղներով. բարբարոս հրոսակներ յարձակեցան ջարդեցին բնակիչներն, կողոպտեցին հարստութիւնն. հեղի պէս անցան գնացին, մնաց ճղակոտոր բոչն: Անցան տարիներ կենսունակ արմատն ծիլ արձակեց, ուռճացան ոստերն երկայնեցին բազուկներն, զարձեալ զգեցաւ իւր պերճութիւնն գեղեցկութիւնն և ճոխութիւնն մինչեւ ի շոայլութիւն: Բարբարոս ազգերու ախորժակն կը սկսի դարցեալ զրգոււիլ, դարձեալ արշաւանք, դարձեալ աւերած և կոտորած. անգութ փայտահարի տապարն իւր խորն կ'իջեցընէ իւր հարուածն՝ սկ օրհասին դուռն բա-

նալով Հայու բազզին առջեւ: Հայն ընդհակառակն չէր սոզեր մեռնիլ, ապրիլ կուզէր բուռն կերպով. այդ բարոյական և հոգեկան ոյժն էր, անոր կենսունակ հիւթն, աւիշն՝ որ կը սողար և ծաւալէր հայրենի հողին գամուած արմատի ջիւքերու մէջ, և մղուելով դէպ ի վեր կը վերակնդանացնէր և կանաչացնէր կոճոպեալ բուռն, նոր բարունակներ արձակելով արմատէն:

Արմատք հին՝ նոր ճիւղ, հին ճիւղք՝ նոր ծաղիկ Ընծայեն բնութեան, Հայոց աշխարհիկ:

Քառասուն դարեր, վսեմ հաճոյքով զիտեցին Մասիսու ձիւնափայլ ճակատէն ստորև կատարուած Հայ ցեղի վերածնութեան գործի նորահրաշ երկոյթները, որոյ բացատրութիւնն միայն մեր հայրենիաց մթնոլորտին մէջ պէտք է փնտունք: Մեր ցեղի հոգերանութիւնն աւելի լաւ կ'ըմբռնեն մեր դահիճներն, բռնաւորներն, բան որ և է այլ մահկանացու: Հայաստանի «իմաստուն և քաջ» պատուհամներէն մին, Շահ-Աբբաս, Երասխայ ջրվէժի շշմեցուցիչ ահեղութեան տեսարանին առջեւ, մըտ-

Քէն զուգակշիռ մ'ըրած է իւր ըրածներուն և հայ ցեղի կրածներուն միջև, ու դառնալով իւր ուղեկիցներուն. «Տեսէք թէ ինչպէս կը դիմադրուի թշնամոյն. — Այո՛, տէր թագաւոր, եթէ այսպիսի ուժեղ նեցուկներ լինին, պատասխանեցին, ցոյց տալով ժայռոտ կողերն յորս սեղմուած կը թափի ջրվէժն »։ Հայրենասէր Երասմին, ոչ թէ Շահ-Աբբասի միայն ներշընչեր էր հայի անպարտելի դիմադրութիւնն, այլ շատ դարեր առաջ Հոռվէմէական լէզէռններն ալ բախեցան նոյն դժուարութեանց, և Վիրզիլիոս արտայայտիչ եղաւ հայկական նկարագրին, փառաբանելով զօգոստոս, որ կարողացաւ զսպել,

Ի կամրջաց զըմբոստն Երասմ.

Ոչ Մեծին Աղեքսանդրի և ոչ Օգոստոսի կամուրջներն՝ շինողներէն աւելի երկար կեանք ունեցան։ Դարերէ ի վեր հայի սրտի մէջ գումարուած վրէժն բուռն թափով Երասմայ ջրերուն պէս, բաղաբացիտութեան սկ ժայռու միջէն, խրոխտ և քաջալանջ երիշարի նման, փրփրերախ և ալէծածան բա-

շովն կ'ոստնուր, կը կռուէր, սկ ժայռեր սկ օրեր կանգնեցին իւր դէմն, սխմեցին բանտերու բորբոսած որմերու մէջ, կախաղաններու հոծ շարքով ուղեցին բանտել հայի վրէժն, բայց դարիւ և դարիւ լցուած Երասմայ պէս, ափերէն դուրս պոռթկալով նահատակաց արիւնն՝ ողողեց և սրաբեցուց նոր սերունդներն բովանդակ հայութեան, որ իրենց քաջազն նախնեաց նման.

Զայն տուեալ խրախուսեցին
Գիմեալք ի մահ յօժարութեամբ.

Գազանացեալ սրտմտութեամբ Առւթանն, տեսաւ իւր սուրճ՝ բթացած Հայի պարանոցի վրայ, զգաց իւր տկարութիւնն. զարիւնն որ այնքան կը սիրէր, սոսկաց Շահ-Աբբասի պէս հայի արիւնէն՝ որ իւր որջի մէջ զինքն պիտի խեղդէր։ Եւ իւրենք թուրքերն, մեր դահիճներն, ծնրադիր աղերսեցին վրիժահան Հայ անձնուրացներու բազուկն, բռնաւոր Խալիֆայի աթոռն կործանելու. այնքան Երիտասարդ կոչուած թուրքերն իսկ վատթարազգի էին և անպիտան արութեան քաջութեան հանդիսի մէջ։ Ազատութեան ուրուականն

անցաւ թերաքամ սրով չայաստանի վրայէն
և կանգ առաւ Աստանայի բեղմնաւոր դաշ-
տավայրին վրայ, ուր ՅՕ հազար հայե-
րու ցնծալից բաժակներն արիւնով լե-
ցուեցան և փշրուեցան: Առաջին անգամն
չէր որ ողջամիտ և մարդասէր հայն կ'իշ-
նար յետամիտ բարեկամի թակարթն,
յետ քաջաբար կռուելու և յաղթելու իբ-
րև թշնամիի:

Երջմոլիկ ազատութեան լոյսը:

Եղբայրութեան և ինքնավարութեան
ծրագրով, արդարութեան և հաւասարու-
թեան գաղափարով, Երիտասարդ Թուր-
քերն՝ շլացուցին զՀայ յեղափոխականներն
և Հայ ժողովուրդն, որ ձեռն կարկառեց
կարմիր Սուլթանի գաճը կործանելու: Յա-
ջողեցան իրենց ձեռնարկին մէջ: Պահ մը
Հայաստանի վրայ մառախլապատ ամպե-
րու ճեղքուածքէն, ծագեց կենդանարար
արեն ինդի և հանգստեան՝ աւելի սկ ու
մուլթ օրերու կսկիծն կրկնապատկելու հա-
մար: Եւրոպէաշաղար քաղաքակրթութեան
դիմակն ինկաւ Աստանայի ջարդով, և Հայ
ժողովուրդն փոխանակ վանդակափակ Գայ-

լուն, յանկարծ զիրենք գտան արիւնարբու-
վազրերու վոհմակի մը հանդէպ: Հայու
վիճակն ճակատազրական դարձաւ. Խաղի-
զրուած էր ողջոյն Հայաստանի գոյու-
թիւնն. կամ պէտք էր Յսմանլի դառնալ
կամ բնաջինջ լինել: Հայ միտքն վերջինս
ընտրեց, փորձուելու Գաղանի հետ փառ-
քի ասպարէզի վրայ: Պապենական բնազդն
էր որ կը զարթնէր իւր մարմնի մէջ, քա-
ջազանց մաքուր արիւնն էր որ կը հոսէր
իւր երակներուն մէջ, զէնքով զէնց մղել.
Ազգիս ազատութեան համար սուրբ, բար-
կութիւնն ի ծոցին մեռնիլ կամ յաղթել: Այս
էր մեր նախնեաց մեզի թողած անկորուստ
ժառանգութիւնն: Այն օրէն Հայ ազգն
պատրաստուեցաւ Հայրենիքի սեղանի վրայ
զոհուելու:

Բականեան պատերազմ՝ Տաճկաստանի
մահազգի զօղանջն թուեցաւ: Յուլգարիոյ
փառաւոր յաղթութիւններն յուսացուցին
Քրիստոսի խաչն կանգնել վերստին Ա-
Առիքիայի գմբեթի վրայ. սակայն Դի-
ւանագիտութիւնն դարձեալ իւր կործա-
նարար գերը խաղաց. գաղանն դարձեալ
խնայուեցաւ. բայց վիրաւորած բարբա-
րոսն իւր թոյնն և ժակըն այնուհետեւ

միայն Հայու գլխին ուկստեց թափել ա-
նողոքելիօրէն : Զառադէմ պառաւի ծի-
ծաղով Եւրոպայի Դիւանազիտութիւնն ,
շահագործեց դարձեալ Հայոց հարցն , ա-
ռանց վրդովելու Հիւանդ մարդու մաղձն ,
նոր բարենորոգութեանց ծրագրով մը՝ ո-
րոյ կատարում յանձնեց ամենատկար տէ-
րութեանց պաշտօնեայներու , որոնք տեղը
հասնելէ առաջ , հրաման ստացան կար-
միր սուլթանականներէն յետ դառնալ:
Թուրքի արքունեաց մէջ այսպէս որոշուած
էր Հայերը ջնջելու ծրագիրն . իտաի-
հատականներն , Համիտի պէս , թուրքա-
կան բնազդումով չէր որ պիտի գործէին՝
այլ որոշ ծրագրով և կարգով , որ իրենց
տրուած էր շնորհիւ գերմանական սոտի-
կանութեան , մանրախոյզ ցուցակներով ,
հատով և թուով: Գերմանական աջակցու-
թեան երկաթի բոռնցքն պիտի արդա-
րացնէր , թէ որ ներէր բաղդն , ինվէրի
զուր սպառնալիքն թէ՝ կ'ուզենք « Հայաս-
տանը առանց Հայոց » : Ինչպէս երբեմն և
կարմիր Սուլթանն իւր բարեկամ Մետեր-
նիխի ասածն իտալիոյ մասին՝ կրկնած էր
թութակօրէն « Այնպէս պիտի ընեմ որ
Հայաստանն լոկ աշխարհագրական ա-
նուն մը մնայ » :

Բիրտ ուժի մսանկութիւնն :

Հասաւ 1914ի համաշխարհական պա-
տերազմն , որ քառասուն ձիգ տարիներ
սպառնալից փոթորկի պատրաստութեամբ
կը ծանրանար աշխարհի հորիզոնի վրայ:
Մարդկային բանավարութեան միջոցներն
ապիկար գտնուեցան կասեցնելու աղէտն .
իրաւունք և արդարութիւն գլորեցան ու-
ժեղի ոտքի տակ . թնդանօթներու բերանն
որոտաց իւր պատգամն , ահ և գողն բըռ-
նեց զտկարներն . իսկ ազատութիւն սիրող
ազգեր , արհամարհեցին ամենայն երկիւղ ,
մահ աչք առած դիմագրաւեցին արիաբար
Տեսոնեան կայսեր դէմ : Փոքր Պելճիան
վսեմօրէն արհամարհեց երկաթապատ բար-
բարսի ստրկացուցիչ առաջարկը , և զէնքն
ի ձեռին կանգնեցաւ իւր սահմանազլիսին
վրայ : Կարծես թէ Վարդանանք լինէին , որ
իրենց կուրծքովը պարսպեցին Տղմուտի
ափերն . նոյն իմաստով , հոգւով և նրտով
կրկնելով . լաւ է քաջաբար մեռնիլ , քան
վատանուն ապրել և վայելել բռնաւորի
ընձեռած շնորհներն :

Պատեց յոնքերն կը յսրն , խելակորոյս
չայկ . Մեմարտը

յանդքնութիւն համարեցաւ զիւցազն ժու-
ղովրդի դիմազրութիւնն. վասն զի ճշմարիտ
ազատութիւն վայելած չէր, և սովորեր էր
ի մանկութենէ գերմանական իմաստափ-
րութիւնն, թէ իրաւունքի և արդարութեան
յաղթողն՝ բռնութիւնն է երկրիս վրայ. ինչ-
պէս նկարագրած է Առղոմոն խմաստունն.
«Եւ օրէնս արդարութեան՝ բռնութիւն մեր
եղիցի»: — Ոչ կայսր, արդարութիւնն միշտ
յաղթող պիտի լինի, վասն զի Արդարու-
թիւնն երկնից դուստրն է, Աստուծոյ ա-
թոռակիցն է և երկրիս վրայ Նախախնա-
մութեան աջ բազուկն: Ամենակալն զի-
տէ խոնարհեցնել ամբարտաւանները և
եղեգէն աւելի շուտ ջախջախել անիրաւ-
ները: «Ոչ յաջողեսցի մարդոյ յանիրա-
ւութենէ, արմատք արդարոց ոչ հատ-
ցին»: Եւ ուր ուրեք աւելի ճշգրտեցաւ
Աստուծոյ խօսքն, որպէս ներկայ պատե-
րազմիս մէջ: Կայսեր մոքէն չէր անցեր
բնաւ թէ առաւօտեան վարդագոյն ծիծա-
ղով ծագած արեգակն, իրեն և իր երկրի
համար, պիտի խոնարհէր սև ու մութ
արենակաթ սպատակեաններու ամպերուն
մէջ:

Լիէժի դրան առջև կը ցնցուի բռնակալ


կայսեր վիթխարի ամբարտակն՝ փոքր ազ-
գի բարոյական ուժէն. բառասուն տա-
րուայ թիւերու մերենական կազմն կը
խախտուի, այլ ևս կշիռն իւր հաւասա-
րութիւնն կորուսած է, և զաշնակցաց զէն-
քերու փայլն կը նշողէ բարբարոս թշշ-
նամւոյ մոայլ ճակատի վրայ, ուր զրուած
է Դանիէլեան պատգամն:

Զգաց երկրածնունդ մարդկութիւնն, որ
Հին աստուծոյ երկրպագուներու յաղթա-
նակն, արդարութիւնն և իրաւունք ոտնա-
կոփ ընելով, բառասուն դարերու զար-
գացման, բաղաբակրթութեան, ընկերա-
կան երջանկութեան զերեզմանը պիտի
պեղէր՝ հելլէն և հոռվմէչական ցեղերու
համար: Թերևս բան զամէնքն զգաց և
սոսկաց Հայ ազգն, որ հեծեր էր դա-
րեր անիրաւ և չար իշխողներու լծի տակ:
Անոր համար կը տեսնանք թէ ինչպէս տաճ-
կական բռնութենէն մազապուրծ ազատած
հայերն, մինչ Եւրոպայի և Ամերիկայի
մէջ իրենց կեանքն ապահով, և կրնային
գեռ աւելի բարեկեցիկ դիրք մը ստեղծել,
շահագործելով ուրիշներու թափած արիւ-
նը, ոչ. վրդովուած և վիրաւորած բաղա-
քակրթեալ ազգի մը բարբարոսական բայ-

լէն, որով իւր բարձրութենէն կ'իջնար կը հաւասարէր թուրքական մակերեսոյթին, անձնանուէր կերպով կը վազեն զինուելու և կոռւելու այն ազգերու հետ, որոնք պատւոյ, իրաւանց և արդարութեան համար իջան պատերազմի դաշտը: Խօսքս Հայ կամաւորներու վրայ է, որոնք արևմտեան ճակատի վրայ իրենց պատուաւոր տեղերը բռնեցին:

Յաւագար Մայր Հայաստանն՝ թանկագին զաւակները դրկած էր Եւրոպիոյ զարգացումի կեղրոններն, կրթելու ազնուացընելու իրենց միտքը և սիրու, և լուսաւորած մտքով և սրտով՝ վերադառնալու իրենց հայրենի վառարանները շէնցնելու, հալածելու դարաւոր թանձրամած խաւարն՝ որ կը ծածկէր Հայաստանն, և բուժիչ սպեղանիներ լինելու վիրաւոր մօր սրտին. տարածելով կատարեալ գիտութիւնը իրենց եղբայրներու մէջ, բանալով աչքերնին խորհելու և գործելու ապագայ հայրենիքի ազատութեան համար: Եւ սակայն այդ ծաղկափայլ երիտասարդութիւնն յափշտակուած գաղափարական գեղեցկութեամբ, ինքնաբերաբար մղուեցաւ դէպ ի փառաց դաշտը. իւր բազուկն և կուրծքն նուիրելու

օտար՝ բայց ազատ և ամենայն կերպով երջանիկ փոքրիկ ազգի մը պաշտպանութեան համար: Եւ որբան սրտազրաւ և նախանձելի թուեցաւ մեզ, երբ իւանդավառ հետաքրքրութեամբ աչքերնուս առջե կը զիտէինք Լիէժի Բարձրագոյն դպրոցներու երկու Հայ ուսանողներու լուսանըշկարը իրենց բելճիացի սպայի հետ ի միամին: Հարցուցէք այդ կորովի և մարտական դէմքերուն, ի՞նչն ստիպեց զձեզ նետուելու համաճարակ հրդեհին մէջ, ի՞նչը համոզեց զիրենք նուիրելու իրենց անձը օտարին. ի՞նչը մղեց զիրենք մահուան վտանգին ենթարկելու իրենց կեանքը. այն կեանքը որ իրենք պարտական էին զոհելու Հայ հայրենեաց սեղանի վրայ և որուն կարօտ էր ցաւատանջ հայ ազգը: Այն կրակոտ աչքերէն, յորմէ մահն իսկ պատկառնըով տեղի կու տայ, պատասխան կը լսեմ. Ուր անիրաւութիւնը բարբարոսաբար կը բռնաբարէ արդարութիւնը, բնութեան մեզի տուած ազատութիւնը, որ բիրս ոյժէն ունակուի կ'ըլլայ, հոն է մեր հայրենիքն, հոն են մեր եղբայրներն. և ի՞նչ աւելի մեծ սէր կրնայ ըլլալ անկից որ մէկն իւր բարեկամի համար տայ կեանքը: Այս, այդ



երիտասարդներն կ'ապրէին ազատ երկրի մէջ, կ'ապրէին տեղական ցեղի մէջ՝ իրուք բարեկամներ և եղայլներ. ինչ որ զգաց և մտածեց Ուելճիացին երբ բարբարոս գերմանացին բռնաբարեց իւր սահմաններն. ինչ ցաւ և զայրոյթ զգաց նա, երբ տեսաւ իւր երկիրը հըսյ և սըսյ ճարակ դարձած՝ նոյն զգացմունքներով անշուշտ տոգորուեցան մեր համակրելի երիտասարդներն: Եւ որովհետև զիրենք զեռ ուժեղ և կորովի կը կարծէին, վտանգուած եղօր հայրենիքին օգնութեան զիմեցին ազնուական բաջարտութեամբ¹: Այս խոսքերը նոր չեն

1. Զալին դէմ ի աչ, Նեկուլայ Օհաննէսով, Թիֆլիսցի, ի մէջին ենթասպայ Ռիշար Մօրէն Պելճիացի (այժմ սպաննուռած): և Ճարտ. ԹիՌԳՈՒՄ ՂԱԶԱՐԱ-
ԼԵԱՆ: Սա ճնշեած է Երգնկա 18 Յուլիս 1880. սակա-
նական ուսումն առած է Երգնկայի Եղնիկեան Վարժա-
րանը, Երկրորդականը Պոլիս Բէրքեբան Վարժարան:

Օսմանեան Սահմանադրութեան վերահստատման՝
1908ին կը մտնէ Պօլսոյ Զինուորական Վարժարանը
Անկելու համեստ մին առաջին հայ սպաներէն, վեցամ-
սեայ և տարձկան քննութեանց՝ զամարանին առաջինը
Անկելուն՝ կը ստանայ «Պաշ Զառչի» աստիճանն: Ատա-
նայի ջարգերէն յետոյ համոզւած թէ ոչ մէկ տարբե-
րութիւն կայ «Ճին և նոր» Թուրքիոյ միջև. կը զգէ
Զինուորական Վարժարանը և կը մէկնի Եւրոպայ
ստանալու համարանական զարգացում: Պատերազմը

որ կը զրեմ, այլ հին արտաքերութիւն
մ'է, այսինքն 1915 վերջերին երբ, վասեմ.
ծիրանաւոր Մէրսիէ Հռովմ կը գտնուէր,
տողերուս զրոյն և Հ. Դանիէլ վ. Ստե-
փանեան, ներկայացանք նախ մեր հիաց-
մունքն յայտնելու իրեն քաջ և առաջինի
քաղաքավարութեան համար, որով իւր
հովանին և հեղինակութիւնն իրեւ անվը-

զինքը կը գտնէ ուսանող Լիէֆի Համալսարանը ելեկտրա-
կան ճիշդի գերչին դասընթացքին մէջ, իւր գերչին քննուր-
թիւնները գրի չ'աւարտած, Գերմանիոյ վատօրչն Պել-
ճիայի գրայ յարձակման 1914 օգոստոս 4ին կամաւոր
Կ'արձանագրուի Պելճիայի բանակին մէջ. իւր օրինակին
կը հետեւ երեք ուրիշ հայ ուսանողներ, Նեկուայ Օհան-
նէսով, Ցովհաննէս Խաչեան և Արամ Պէկատեան:

Փափաքելով առաջին օրէն իսկ զործող բանակին
(armée active) մասն ունենալ կը յայտնէ թէ զիտե-
նալով ձի հեծնել և զինը շարժել, պէտք չունի զինուո-
րական նոր կրթութեան և կը յաջողի ինքնինքը ար-
ձանագրել տալ այրեմիոյ զնդի մէջ (2me Lancier):

Լիէֆէն մինչէ իզէր կը մասնակցի տեղի ունեցած
կոփեներուն, կը վերաւորուի Դիբամուտի առջև. ինամար-
կուելէ յետոյ իւր սպաները զինըն անկարող ընել կուտան
որպէս զի կարենայ աւարտել իւր ուսումը Բարիքի մէջ:

Որա եղբայրն է մեր յարգելի բարեկամի և իտա-
լիոյ զաղութին Հայկ-Գոմիթէի անդամ Հայկ Ազա-
ռոսեանն, որ ազնութեամբ մեզ հայթայթեց եղրօր կի-
շել, որոյ համար մեր մասնաւոր շնորհակալութիւնն կը
յայտնենք,

կանդ ասպար մը, կարկառեց բարբա-
րոս թշնամւոյն հարուածներու դէմ, ի
պաշտպանութիւն իւր զիւցազն ռազմիկ
որդոց. երկրորդ խնդրելու որ իւր մար-
գարէաշունչ գրիչն շարժէ պահ մ'ալ իւր
զաւակներէն շատ աւելի անգութ և ա-
նիրաւ չարչարուող ժողովրդեան մը դա-
տին պաշտպանութեան համար: Մէծ հա-
մակրութեամբ լսեց մեր նահատակ ազգի
մարտիրոսագրութիւնն, զգացուեցաւ և յու-
զուեցաւ, յուսազրելով մեզ որ մեր ա-
զաշանքն ի զորք չպիտի անցնէր: Մէր
աղէտներու մանրամասն տեղեկութիւններ
ուզեց, որոնք կարելի եղածին չափ մատա-
կարարուեցան: Ահա այս տեսակցութեան
միջոց հայրենասիրական հպարտութեամբ
դրուատելով մեր քաջերը, պատկերիս լու-
սանկարն ցոյց տուինք, աւելցնելով որ
գեռ ուրիշ հայ կամաւորներ ալ մտեր են
թելճիացոց շարքերուն մէջ: Նայեցաւ լաւ
մը լուսանկարին և անոյշ ժպիտով ըսաւ
որքան կը յիշեմ. «Քանի որ այսպիսի
քաջեր ունիք, Հայաստան չի մեռնիր.
Կ'օրհնեմ զիրենք որ օր մը յաղթական
դառնան իրենց ծնողաց և հայրենիքին
տանին ազատութեան աւետիսն»:

Դալար մանկոիք, ձեր տակն է Արարատ.
Պինդ կացէք, Աստուած ցողէ ի վերէն,
Ծըլիք ու ծաղկիք քանց վարդ ի թըփէն.

**Այս՝ Հայաստան չի պիտի մեռնի՛. մենք
արդէն հաւատացած էինք: Վսեմ. Ծիրա-
նաւորի հայրենասէք զգացումներն՝ համա-
պատասխան էին Նահապետի սրտէն բիսած
իրախայսին որ դրած է հայրենիքի ԱԶԱ-
ՏԱՐԱՐ ԽՄԲԵՐՈՒ բերանը.**

Զէն առէք, ժի՞ր կացէք ընկերք իմ սիրուն...
Հա՛ փայլիր, հա՛ սլացիր երկաթ ու պողվատ,
Հազրով բիւրով թափէ բոցեր անընդհատ.
Շորջ շողացիր ծայրէ ի ծայր հայրենեաց
Մանրէ՛ մաշէ զգէնք մեր ամեն թընամեաց...
Թող աշխարհաց լուր լինի՝
Որ քանի եմք կենդանի
Հայաստան ոչ տի մեռնի:

Գիշերաշըխիկ թուրքերու խորամանկու-
թիւնն:

**Մինչդեռ արիական Պելճիա, անհաւա-
սար կռուի մէջ բռնաւորէն ոտնակոխ, կը
տեսնար իւր որդիքը հրոյ և սրոյ մատ-
նըւած, մինչդեռ Գաղղիա, քաջամարտիկ
յետ կը մզուէր իւր սահմաններէն, և թըշ-**

նամին զգլիսած յաջողութեան շոգիով,
յառաջ կը վարէր իւր յաղթական կառ-
քերն և երիվարներն զիսկներով սալար-
կած պողոտաներով, փութացնելու կայ-
սեր խօսքի կատարումն, պատերազմի հրա-
տարակելու առաջին օրէն ըսածն. «Երբ
մեր դաշոյնն միսենք Գաղղիոյ սիրտն, այն
ատեն խաղաղութիւն կը տիրէ աշխարհի»:
Գաղղիոյ սիրտն ոչ միայն, այլ և միտքն
Պարիսն էր, և հոն կը դիմէր բրուսական-
կատաղի գունդերու հեղեղն: Այս պահուն
Արևելք այլ տեսաբան կը ներկայացնէր,
արժանի յիշատակաց և հիացման:

**Երիտասարդ թուրքերն թև առած գեր-
մանական զինուց առժամանակեայ յաջո-
ղութենէն, ինչիք որ Գուլիէլմոսի alter-
egoն կը հաշուէր զինքը. սեխացեալ
ընդվզեալ ապարրաներ նոր ոմն Յազկերտի
պէս: Երկրորդ բալգանեան ձախող պատե-
րազմէն զկնի՝ գողոնի յաջողութեամբ յետ
կորզելով զԱղիանուպօլիս, դարձուց ա-
չերն դէպ ի Արևելից աշխարհն, և յիշեց
1877-78 պատերազմին կորուսած զա-
ւառներն. յիշեց իւր դարաւոր թշնամին,
որ Ճապոնի կոռուի մէջ տկարացեր էր և
հիմայ զբաղած արևմտեայ ճակատի վրայ.**

վայրենի ախորժակն զրգութեցաւ դիւրագին որսեր ձեռք բերելու: « Բըէզլաւ » և « Կէօպէն » զրահաւորներն վոսփորի գեղածիծաղ ափերու մէջ օրօրուելով, օրօրեցին թուրքի սնոտի յոյսերն ապագայի փայլուն յաղթանակներով: Գիշերայած գաղաններու խորամանկութեամբ « հաւատափոխ զրահաւորներն » բարեկամ տէրութեան անպաշտպան քաղաքներն ուրմբակոծեցին. թուրքն և Գերմանն զիրար ամբաստաննեցին հաւատազրժութեան մէջ, ինչպէս երբեմն գայլն ու կապիկն, ըստ Եսովյեան առակին. բայց ոչ միոյն չըմեղութիւնն հաւատալի եղաւ. վասն զի երկուքն ալ սովոր էին ստել, երկուքն ալ անիրաւ, երկուքն ալ բարբարոս, երկուքն ալ չարագուշակ ուրուականներու պէս մահու սարսափ ծգեցին քրիստոնեայ տարբի մէջ, մանաւանդ Հայերուն, որ կըզգիացած կը մնային և կը մատնուէին թուրք խուժանի մոլեռանդութեան:

Այս տագնապալից բոպէներուն՝ Հռովմի դեսպանատան մոլլա Վէլի էֆ. մեր հարցմանն թէ ի՞նչ է թուրքի նպատակն առանց մի պատճառի այս թշնամութեան ցոյցերն գէպի Ռուսաստանն. Բարեկամա-

բար, ասաց՝ թէ կուզենք կովկասի կողմերն ուղղել փոքր մի մեր հին սահմաններն: Մինչև մոր Մինչ կարս, Բաթում, ուր էր 1877-78 պատերազմէն առաջ: Խակ Հայոց վիճակն ի՞նչ պիտի ըլլայ: Հայերուն ազատութիւն պիտի տանը և կովկասու զանազան ազգութիւններու հետ դաշնակցական հանրապետութեան պէս բան մը պիտի ձևացնենք, օսմանիի հովանաւորութեան տակ, որպէս զի պատուար մը ըլլայ այնուհետև Ռուսի յառաջիշաղացութեան դէմ դէպի մեր կողմեր: Միսիթարեան Վարդապետը վրայ բերաւ, եթէ Հայերուն ազատութիւն պիտի տայիք, ինչու ուրեմն այնքան ջարդեր սարքեցիք: Վէլի էֆէնտին « անկեղծօրէն » ցաւ յայտնեց անցելոյն նկատմամբ, և յանցանքն ձգեց Ապահով Համիտի րեժիմի վրայ, որ թշնամութիւն և երկապառակութիւն ստեղծեց մի հողի և ջրի ընկերի և եղբայրների մէջ: Վէլի էֆէնտին, բանիմաց հայերու հստ խօսելով, կեղծեց թուրքի խորամանկութեամբ հաւատացնել և սրտապնդել, որ մեր երկիւղն անհիմն էր կասկածներ յայտնելու Երիտասարդ Թուրք վարչութեան նկատմամբ, որու նպատակն

է իւր հպատակներու անդորրութիւնն և
երջանկութիւնն։ Այս Թուրք կառավա-
րութեան խոստացած երջանկութիւնն իւր
քրիստոնեայ հպատակներուն, կը կայա-
նար շէն մարդարնակ զիւղեր, աւաններ
անապատներու վերածելը, ուր կը տիրէ
յաւիտենական լուսթիւն, ինչպէս ապա-
ցուցին յետագայ դէպքերն և սարսափ-
ներն։

Թուրքի անմիտ առաջարկութիւնն.

Թուրք մեծամեծներն, ինչպէս կայսրն
փորձեց զՊելճիացիս, Ռուսիոյ դէմ պա-
տերազմ հրատարակելու պահուն, անմիտ
և վատազգի առաջարկն ըրին Հայոց ազ-
գին կաշնակցելու իրենց հետ ոճրագործու-
թեան ձեռնարկին մէջ, և ճիշտ վէլի էֆէն-
տի ակնարկնած ազատութիւնն առա-
ջադրեցին, եթէ միաբանին ուրք հանելու
կովկասու հայերն Ռուսիոյ, կամ նոյնէ ա-
սել, Համաձայնութեան դէմ։ Որքան և
Հայերն զեռ իրենց սրտի վրայ կը կրէին
1903թ. Գոլիցինեան վէրքերու երաշ-
խէպքն, սակայն ազգային արժանապատ-
ւութեան վիրաւորանք և նախատինք հա-

մարեցան դաշնակցիլ խաւարի հետ՝ կոիւ
մզելու լուսոյ դէմ, դաւաճաննել իրենց դա-
րաւոր գաւանանցին, որով կոուել են միայ-
նաբար ամեն տեսակ բռնակալութեանց
դէմ, յանուն իրաւանց և արգարութեան։
ի սէր սեփական ազատութեան։ Ի՞նչ բա-
նի վրայ կը վստահէին հայերն Թուրքի ա-
ռաջարկն ընդունելու. Կայսեր մը խոստման
վրայ, որ հանրազգային հանդիսական
դաշնագրերն ճըմովթկուած թղթի կտոր-
տանք կոչեց, թէ Երիտասարդ Թուրքերու
պատոյ խօսքի վրայ, զոր լուսցին Ատա-
նայի ՅՕ հազար նահատակներու արիւնով։
Բայց այդ առաջարկն յինքեան կը պա-
րունակէր զիւական խորամանկութիւնն,
սեացած խղճերուն հանդարտութեան հա-
մար, որով ապազային մեղաղրէին զՀայերն
անհաւատարմութեան և ապստամբութեան
կեղտով վարակուած, «Յսմանեան երկրի
օրինաւոր կառավարութեան դէմ»։

Այսպիսի անխոհեմ քայլ մը առնելու
համար հարկ էր Հայուն մոռանալ նախ
իւր չորս հազար տարուան պատմութիւնն,
իւր յառաջընթաց քաղաքակրթութեան դե-
րը յառաջաւոր Ասիոյ մէջ, հանդէպ շուրջ
պատած բարբարոս ազգերու, որով ոսկի օդ

մը կազմեր էր եւրոպական գործնական զարգացման, արևելցու տաք և վառվուն մտածելակերպին հետ. երկրորդ պէտք էր ուրանաւ իւր քրիստոնէական կրօնքն, ու բով ի սպառ մերկանալով ասիական խորխըն, ազնուութեամբ փայլեցաւ և գաղաւ փարական վեհութեամբ մրցեցաւ իւր քոյրաթիւ արևմտեայ հաւատակիցներու հետ։ Աւելորդ է պնդել ապացուցանելու համար կրօնքի ունեցած ազդեցութիւնն մարդու հոգաւոյ, մտքի և սրտի վրայ, բաւական է միտք բերել Դէ Ամիչիսի երկու ցեղերու բնազրոշմի նկարագրութիւնն։ Հեղինակն Բոսփորի փոքրիկ շոգենափիկներու վրայ ճանապարհորդած ժամանակ կը զրէ իւր տպաւորութիւնները։ Մի Հայ և մի Թուրք նստած են իւր հանդէպ. կը նայի Հայու երեսն և կը զրէ փոքր ի շատէ. Բանական էակ մը որ կը խորհի կը մտածէ, իւր մածութիւնք կ'արտացոլան աչքերու մէջ, շարժումներն սրտի զգացումները կ'արտայայտեն, կ'իմանաս որ քեզի նման մէկն ունիս առջեղ, որու հետ կարելի է մտքեր և գաղափարներ փոխանակել և ի միասին ապրել։ Խակ միւսն, Թուրքն, ծալապատիկ նստեր է բազմոցի

վրայ, համբիչը ձեռքն է, կերպարանքը սգաւորի, սպած և զիմահար աչքը, ոչ մի բան արտացին աշխարհի հետ զինքն չի հետաքրքրեր. իեղճ վիպասանն անճրկած բնչպէս բացատրէ Թուրքի հոգեբանութիւնն. նմանութեան մը կը զիմէ որով կը բացատրէ իւր ունեցած տպաւորութիւնն, որ իւր տեսակին մէջ միլիոնաւորներ կը պարունակէ։ Թուրքն՝ կ'ըսէ զրեթէ բառացի, նստած է զիմացս իբրև եզ մը որ կուշտ մը արածելէն վերջ կը նստի կ'որոճայ, անիմաստ և անբան աշքերով, որ իւր փորէն անդին ոչ կը զգայ և ոչ կը մտածէ։ Ահա քսաններորդ դարու ճակատագրական և ազատագրական պատերազմին կոչուած են այդ երկու ցեղերն իրենց գերը կատարելու. և որովհետեւ լոյս և խաւար չեն միաբանիր, նոյնակն Հայը՝ և Թուրքն. զի մէկն շինող է միւսն աւերող. մէկն կանգնող, միւսն կործանող. մին յառաջադէմ, միւսն յետադէմ. մէկն աչքն դէպի գաղափարական հորիզոններն է յառած, միւսն իւր հին զուրանի մէջ խորասուզուած. մէկը դէպ ի երկինք իմացական աշխարհի մէջ սրաթռիչ արծուոյ պէս կուզէ խոյանալ, ազատ շնչել, ազատ

ապրել, սեփական կեանքով, իբրև բնուաթեան որդի. միւսի զլուխն վայրահակ յերկիր, խաւար կը փնտռէ զիշերաշըջիկ գազաններու բնազդով. իսկ ցորեկն՝ որոճացող անսասուններու պէս, միայն փորի վայելքն՝ դալար արօտատեղիններու մէջ փընտռող: Այս տարօրինակ մենամարտի մէջ, հարկաւ Մտքի տիրապետութիւնն՝ գերակշող դեր պիտի կատարէր Թուրքը մթնուրատի մէջ, որ միշտ Դէ Ամիչիսի նկարագրած յաւիտենական եզր պիտի մնար և ճնշուէր Հայի լծի տակ. Non solum armis: Ասոր համար անշուշտ Թուրքի պաշտպանութիւնը խիստ ցնցշաբար ստանձնեց Բիէն Լօթի, որ արիւնաբրու գազաններու դատը պաշտպանած ժամանակ՝ աւելի կը վայելէր իրեն Անասնախնամ ընկերութեան մը անդամ զրուիլ, քան Գաղղիոյ հոչակաւոր ճեմարանին կաճառորդ անուանուիլ: Գազան և միայն գազան, կրցաւ կոչել Տրապիզոնի իտալական ընդհանուր հիւպատուն Մեծ. Յ. Գորգինի՝ զերիտասարդ Թուրքերն օսմանցիներն, որ ականատես եղած էր Տրապիզոնի Հայոց աղիողորմ կոտորածներուն:

Վոսփորի ափերու գազանները:

Այս ուղիշ կերպ չէ կարելի մտածել և պատկերել Վոսփորի ափերու վրայ ժողոված մարդ-գազաններն, որոնք իրենց ճիրաններու մէջ բռնուած գտան վերջապէս Հայ ազգը, զրկուած ամեն միջոցներէ և ամեն յոյսէ օգնութեան, Պեոլինու 61 յօդուածին ստորագրող Պետութիւններէ: Հայու սարսափելի վիճակն՝ արիւնախանձ վոհմակի ախորժակն և հրճուանքն գեռ սաստկացուց. և սակայն չհամարձակեցան ճակատէն մօտենալ. ամենաստոր դաւաճանութեանց դիմեցին. քանզի ճըշմարտութիւն Թուրքի ըերնէն չէ ելած: Մեր Խաչն ու Աւետարանն ստութեան և խարէնութեան զործիք առին, իրենց լարած թակարդի մէջ ձգելու ճշմարտութեան և լուսոյ որդիքը: Սատանան ալ զիտէ հրեշտակ լուսոյ կերպարանիլ, խարելու և միայն խարելու համար:

Այնուհետեւ ամբողջ ազգը պատրաստուեցաւ մենանելու, բայց քաջի մահուամբ մեռնելու. կեանքը ստիպուած պիտի կորցընէր, բայց պատիւը փրկել իւր ճեռքն էր

և հաւատարիմ մնաց իր հաւատքին և իւր պատոյն։ Ամբողջ դարերու ոճիրներն իշմիասին գործուեցան, ամեն տանջանքներ միանուագ ի գործ դրուեցան, յազեցնելու պարզապէս գաղանային սրտմտութիւնն։ Նահատակութեան լուսաշող պսակն համաւասար պատեց ծերու և երիտասարդի, այր և կնոջ ճակատներն, մատաղահասակ մանկտին, նոնենոյ կարմրաբոսոր կարկըտահար ծաղիկներու պէս, թօթափեցան ծնողաց հօր և մօր գրկին մէջ, և բոլորն իշմիասին անցան յաւիտենական դռնէն խառնուելու Ատովմանց, Ուկեանց և Վարդանանց գնդին հետ։

Իսլամութեան պաշտպան կայսեր Սաւահէտտինի գոռի վրայ դրած ուժան կատարուեցաւ, որդեզրած թուրքերը սոսկալի վրէժինդրութեամբ, Հայաստան ամբողջ միսացող աւերակաց կոյտի մը վերածեցին։ Ուրախ եղէք գերման ժողովուրդ և զիտնական պատմաբաններ, չկան այլ ևս Հայերն, դէք ձեր քաղաքակրթութեան գործն սկսեցէք արևելքի մէջ, ձերն է ապագան...։ Ծնդունեցաք անշուշտ ձեր քաղաքակրթուած դաշնակիցներու համբոյրն, քանզի Համիսլամական տիրապե-

տութիւնն ապահոված է ձեզի Արևելքի ճանապարհներն և գանձերն, արդէն եռոտանին կանգնած է, որոյ վրայ կը ծխայ հայ արիւնն. Համբուրգ, Պոլիս և Պաղտատ կը հմայեն լուսաշողշող երջանկութեան գալիք դարերը, բարբարոսութեան և զիշերի իշխանութեան տակ...։

Այսպէս կը մտածէին Լիէժի կործանողներն, Եարև Ոսայի յաղթողներն և Թուրքի արժանաւոր դաշնակիցները։

Իրաւունք եւ արդարութիւն կը զինուին։

Սակայն իրաւունք և արդարութիւնն ուրիշ կերպ տնօրինած էին աշխարհիս բաղդը։ Խաւար ոյժի գէմ, միաբանեցան ամէն ազատութիւն սիրող ազգեր, քաղաքական հաւատոյ նոր դաւանութիւն մը կազմեցին։ Ազգերու դաշնակցութիւնն։ Ամերիկական ազատ շունչն թևատարած անցաւ Ովկիանոսներու երեսէն, հասաւ նորոգելու հին աշխարհը։ Ազատութիւնն և Բոնակալութիւնն՝ ահեղ մենամարտի բըռնուեցան. այնուհետև ի հանդէս եկան խելքն, ճարտարութիւնն և քաջագործութիւնն Դաշնակից բանակին՝ որով Գաղղիոյ

և իտալիոյ հայրենասէր գետերն և Ան-
գլխական ծովերն անմահացան նահատակ-
ներու ամբիծ արիւնով շահած յաղթու-
թիւններով։ Ամենի ջետոն գազանի ա-
տամներն թափեցան, ճիրաններն բթացան
կարծրակուռ հարուածներու տակ, ինկաւ
փոռւեցաւ գետին, զգաց իւր պարտու-
թիւնն և աղերսեց հաշտութիւն։ Վիթխա-
րի վարազի ինկնալով զաճաճ նիզակա-
կիցներն ժանգահար երկաթի պէս փշրուե-
ցան և նմանապէս ծնրադիր մուրացին
հաշտութիւն յաղթողէն։

Արբայաշուք հսկայի պէս իրաւունքն
և ծիրանեփառ դժխոյի նման Արդարու-
թիւնն բարձր ի թիրախ բարձրացուցին
յաղթական զրօշն, հնչեցաւ խաղաղու-
թեան ձայնն։ Խաղաղութիւն, անպատճմ
ցնծութիւն ամեն սրտի. խաղաղութիւն,
որ առաջին անգամ, համայնաջունջ ջրհե-
ղեկն յետոյ, նկարեցաւ մեր հայրենեաց
կապոյտ երկնքի վրայ, երիներանգ եռա-
խորհուրդ գոյներովն, աղեղն ծիածան որ
դրոշմեց առաջին համբոյրն Մասիսու Սուլը
սարի կուսական ճակատին։ Ո՛վ Տեառ-
նագիր նշան իսկական հաշտութեան. նշան
որ կամարիդ երկու ծայրերով կը գուգես

յաղթողաց ձեռքերն պարտելոց հետ, և
կը նուիրագործես ազգերու եղբայրութեան
զաշնակցութիւնն, եկ դարձեալ երեցիր
մեր սերելի հայրենեաց երկնակամարին
վրայ, աւելի պայծառ, աւելի նուիրական,
գոյներդ առած նահատակաց բոսորագեղ
արեան աւազանէն։ Սակայն, զու կը յա-
մենաս ծածանելու ակնախտիղ լոյսերու
մէջ Ազատ Մասեաց կատարէն մինչև գե-
ղածիկ Այսակ ափունքն։ Դաշնակից ազ-
գերու յաղթանակի շառաչն հասաւ մինչև
անծանօթ երկիրներ, Գաղղիա ցնծալից
և խանդավառ կ'ընդգրկէ յետ քառասնա-
մեայ գերութեան զԱլզաս և զԼորէն. Գաղ-
ղիոյ բաղդի զեկավար կլէմանսօն, երբ կը
սքանչանայ ալզասուհւոյ մը ուրախու-
թեան վրայ, կը պատասխանէ աղջիկն.
«Հիմայ յիրաւի կը ծիծաղինք, Տէր իմ,
վասն զի շատ լացինք» — իտալիա սըր-
տապատառ հրճուանքով Տրենո և Տրի-
եստ եռագոյն զրօշի ծալքերու մէջ զու-
գեց մայր երկրի հետ, դարաւոր հառա-
չանքներ հնչիւն ծիծաղներու փոխուեցան։
Հին Ալբիոն, փառաց լոյսերու մէջ կը
լողայ, ովկիանոսներու ալիքներն անպար-
տելի ժայռերուն ընդհարուելով, փշրուե-

ցան խաղաղացան՝ անպարտելի տորմղի ւանջերուն համբոյր տալով։ Այսպէս մի ըստ միողէ Բելճիա և Սերբիա և Զեխս-Ուլաւեաններ, որոց յօշոտուած դիակներու վրայէն անցան բարբարոս թշնամոյ գերանդազէն կառքերն և երիվարներն, այսօր ամեն ցաւ սուզ և տրտմութիւն մոռցած, երգով ու պարով իրենց ազատութեան տօնը կը կատարեն։ Իսկ Մայր Հայաստանն, չլսեց ոչ մի աւետեաց ձայն, ոչ մի կոռւնկ դեռ խապրիկ մը չտարաւ թէ՝ Մերկացիր սգորի զգեստներդ, ել զարդարէ ցաւազին գլուխդ դժխոյի խոյրով, ահա կը վերականգնի նոր և Ազատ Հայաստան, և պիտի վերադառնան ծոցդ՝ ցրուած և գերուած որդիքդ, որոնք իրենց արիւնով գնեցին և ստացան քեզի այդ ազատութիւնն, հասարակաց թշնամոյն դէմ կոռւելով ինկան սկսած Մազուրեան լճերէն, կարպաթեան սարերէն, Մառնայի ափերէն, Սարիզամիշի և կարնոյ բարձունքներէն մինչև Հարաբայի փառապանձ ուզմաբեմին վրայ։

Ի՞նչ ստիպեց զՀայն կոռւելու համաշխարհին պատերազմի մէջ, երբ դեռ առորոշ էր իւր վիճակն և բաղդն, և ի սկզբան

թուէր, եթէ յաղթող կամ յաղթուած՝ միշտ օտարի լծին տակ պիտի ծառայէր ստրկարար։ Մի միայն իրաւունքի և արդարութեան տենչն որ կը խտանար ազատութեան սիրոյ մէջ։ Հայ ցեղի այս վեհ և անզուգական յատկութիւնն կարմիր թելի պէտքուած է իւր պատմութեան էջէրուն վրայ՝ զոր պիտի փորձենք հաւաստել։

Վեհաժողովի արդարադատութիւնն։

Ազգերու բազզորոշ վճիռներու ժամանակ, Նոր Արիոսպագինն պէտք է ի նկատի առնու Հայի անցեալն, ներկայն և ապագան ի սէր իրաւանց և արդարութեան։ Եւ հարկ է ընդ միշտ փարատի Հայի մտքէն նոր շղթաներու երկիւղն, և Հայ օրիորդներն ալ կարենան ասել։ Հերիք լացինք, իրաւացի է մեզ ևս ծիծաղելն։

Հարկ չենք համարիր կրկնել այն ինչ որ աշխարհ ամենայն հաստատեց թէ այս ազատագրական պատերազմին քան զամեն ազգ աւելի տանջուեցաւ և տասնապատիկ աւելի զոհեր տուաւ Հայ ազգն, անոր համար որ չկամեցան դաւաճանել գաշնակիցներուն և զէն ի ձեռին ասպա-

թէզ իջան իրաւունքը և արդարութիւնը
պահանջելու և պաշտպանելու հին և նոր
բարբարոսներու դէմ: Այդ զինակցութիւնն
նեշնչեց և փութացուց մեր ցեղի բը-
նաջնջումն: Զէզոք մնացող ազգերուն ազ-
դարարուեցաւ թէ արդիւնք չունեցողն,
վարձատրութեան յոյս չունենայ հաշտու-
թեան վեհաժողովի մէջ: Վեզ համար ով
սիրուն հայրենիք ով կրնայ աւել որ չէ-
զոք կամ անտարեր մնացիր մարտական
գործերէ: Հարկ է շարել մի ըստ միոջէ
այն ամեն յիշատակութիւնք և արիական
գործերն, որոնք ինքնաբերաբար գործուե-
ցան, առանց շահախնդրութեան, առանց
յետին մտքերու, այլ պարզապէս մարդա-
սիրական հոգւով, ազատութեան սիրով:
Դու քան զամեն ազգ տառապած էիր,
սեփական ազատութիւնդ կորուսած և տա-
րագիր հայրենի երկրէդ. դու դարերով
բռնաւորաց երաբբարոսաց զաժանութեան,
անզթութեան և գագանութեանց համն ա-
ռած, ուստի քան զամենքն աւելի կրնա-
յիր գնահատել իրաւունքի, արդարութեան
և ազատութեան արժանիքն: Եւ իսկապէս
1914 օգոստոսի խուճապ տագնապի օրեւ-
րուն քաղաքականացեալ աշխարհին, դու

քան զամէն քո զուգակից և բաղդակից
ազգերն, յառաջաղէմ և վրէժինդիր արդա-
րութեան, անձնանուէր նետուեցար համա-
ճարակ հրդեհի մէջ: Դունոյնչափ խոռվեցար,
յուզուեցար, զայրացար, որչափ Ծևտոնեան
հրոսակներուն դէմ դիմազրաւող Գաղղիան,
և Թելմիան, վազեցիր, խառնուեցար անոնց
գունդերուն հետ, խառնելով արիւնդ այն
նահատակաց արեան հետ որոնք լիէժէն
սկսած մինչեւ Մառնայի ափանց վրայ
թափեցան, փրկելու զմարդկութիւնն և
քաղաքակրթութիւնն՝ քսաներորդ դարու
կուշտորական բարբարոսներէն, որոնք
միայն սիրեցին և սիրուեցան թուրքերէն:
Հայ միտքն իսկոյն այնքան լուսաւոր
կերպով ըմբռնեց, թէ բիրտ ուժի յաղթա-
նակն, վերջին աղէտն պիտի ըլլար մարդ-
կութեան, որքան վտանգին ենթարկուած
երկիրներու մտաւորականներն: Պէտք չզգաց
յորդորի և կոչի ինքնապաշտպանութեան
գործին: Դաշնակիցներու պարտութեամբ
անդառնալիօրէն կորսուած էր նաև Հայ
ազգն, որ ըստ կարմիր Առվլթանին լրկ
աշխարհագրական անուն մը պիտի մնար,
և զժբաղդաբար իրականութիւն պիտի ստա-
նար 1915ի զարհուրելի կոտորածներով,

եթէ Աստուած մոռացած լինէր զՀայաստան:

Հայ ազգի փայլուն ընդունակութիւնները:

Եւ ո՞ր ժամանակ Հայ ազգն իսկզբանէ ճակատագրական և բաղզորոշ պատերազմներու մէջ չէ ցոյց տուած իւր փայլուն ընդունակութիւններն, խաղացած ուրոշ դերն և մատուցած թանկազին ծառայութիւններն, ողջոյն մարդկութեան երածանկութեան համար: Աստուած զնա ոստիկան և պահապան կարգած է արևելքի դաներուն, կուրծքը դէմ տալու ամեն դարերու բարբարոսաց արշաւանքներուն, սուրբ գործածելու բռնաւորներէն վրէժ խընդրելու: Ուր որ կոիւ կայ սեփական իւրաւանց և ազատութեան, ուր արդարութեան բողոքն կը բարձրանայ, Հայն միշտ պատրաստակամ նուիրեր է առատարար իւր արիւնն: Հարկ է հեղահոգի երկրագործ խաղաղասէր խոյանշան արիական ցեղին կոիւ մղել նոր բիրտ ուժի ցլազուխ բարբարոսներու բռնութեան դէմ: Հայկ չի վարանիր իւր երեք հարիւրով Բէլի անթիւ հրոսակներու դէմ խիզախել ցեղային

կոիւ մ'է որ դարեր պիտի տես, և Ռւրարտացիք կ'ապահովեն արևմտեան Փոքր Ասիոյ ափերուն վրայ ապրող ժողովուրդներուն զարգանալ գեղարուեստից և զիտութեանց մէջ, որով Յունաստանն պիտի լինէր մայր և դայեակ ամենազգի բազացակրթութեան: Պէտք է ջախջախել և կապերու տակ զնել Բարելացոց բռնաւոր ինցնակալութիւնն, որ շատ ազգեր կործաներ և թշուառացուցեր էր և քսաներորդ դարու Բօշերու պէս ահաւոր սպառնալիք մ'էին զրացի աշխարհներուն, ահա Երեմիա Մարգարէն հրաւէր կը կարդայ յաստուածակոյս կողմանէ Արարատեան թագաւորութեանց և Ասքանազեան զնդին: Հայ զնդերու զրօշներն կը ծածանին կիւրոսի բանակին մէջ, իրեւ դաշնակիցներ յաղթանակաւ կը մտնեն Բարելոն. այն ժամանակէն Հայերն ազատարարի դերը կը կատարէն պատմութեան էջերում:

Յունական զարգացման ազդեցութիւնն:

Մեծն Աղեքսանդր Գրանիկոնի և Խսսոսի յաղթութենէն վերջ, Դարեհին պատասխանած էր. Երկիրս ալ երկնքի պէս մէկ տէր

մը, մէկ արև մը պիտի ունենայ, և երկու վեւ
հապետներն Աղբելայի մօտեր իրենց բաղ-
դը նժարի մէջ ձգեցին: Եթէ Պարսկիներն
Հայոց կէս քաջութիւն ունեցած լինէին,
արևելքի և Հայաստանի վիճակն ուրիշ
հանգամանքներ պիտի ստանային: Վա-
հէ քառասուն հազար քաջերով Պարսից
ձախ թեն կը կազմէ, որուն հանդէպ Ա-
ղբսանդր իւր քաջ զօրավարը Պարմինիոն
կը կարգէ: Խառնուրդի ժամանակ Պարսից
աջ թեն ի փախուստ կ'աճապարէ, Աղբ-
սանդր Կեղրոնը կը փլուզէ և կընկակոխ
կը հալածէ զթշնամին. սակայն Յունաց
աջ թեն Հայոց յանդուզն բախմանէն յետ
կ'ընկրկի, կարգերն կը խանգարին. Պար-
մենիոն օգնութիւն կ'աղերսէ Աղբսանդրէն.
առիւծաբար մոնչելով կը հասնի Աղբ-
սանդր, քաջք ընդ քաջս ելեալ երկոքին
կողմանքն զպարտութիւն խոստովանէին.
բայց երբ յունական ձախ թեն պատել
կը փորձէ Հայերն՝ սոքա ի փախուստ կը
դառնան¹. սակայն յաղթողն փոխանակ
ընկնելու իւր քաջ ախոյեանը, բարեկա-
մութեան ձեռն կը կարկառէ և այնուհետեւ

1. Արեանոս հա. Ա. Էջ 118 ԺԱ. Մէլան 1826.

Աղբսանդր հայ նժոյգներու վրայ աշտա-
նակած կը միւէր պատերազմերու մէջ :
Հոս չերողոտոս ունեցած է իւր ազգեցու-
թիւնն Աղբսանդրի վրայ, որ զՀայերն
կը դնէ բնիկ թեսաղիոյ, ուսկից գաղթած
են ի Փոփազիա և տարածուած Հայաստա-
նի մէջ, որով ցեղակից յունաց. և կամ
իրեւ հատուած մը Բագոսի բանակին, որ
յետ Հնդկաստանի արշաւանքին իւր զօ-
րաց մի մասն բնակեցուց Հայաստանի մէջ:
Այս կարելի է համարել որ Աղբսանդր-
դաշնակից ըրած է զհայերն Հայ իշխան-
ներու ինքնավար կառավարութեան ձեր-
տակ, որովհետեւ իւր տիրապետուած ազգե-
րու ցուցակն զրկելով Յունաստան՝ կը
պակասի Հայերու և Հայաստանի անունը:
Հայ ցեղն դարերով անջատուեր էր արեւ-
մուտքէն շնորհիւ պարսիկ տիրապետու-
թեան, որոյ լծի տակ՝ Յոնիական ծաղ-
կեալ զաղթականութիւնը կորսնցուցին իւ-
րեանց փայլն: Հայաստանն այնուհետեւ
յունական ազգեցութեան տակ, դարձաւ
յառաջապահ և յառաջամարտիկ արևմտեան
քաղաքակրթութեան և յառաջազէմ զար-
գացման արևելքի մէջ, և կանգնեցաւ իրեւ
պղնձէ պատուար մը ընդդէմ բարբարու-

սաց արշաւանքներուն, որոնք Ասիոյ խոռոչերէն կուգային շարան շարան, կողոպտելու, կործանելու, ջնջելու մարդկային մտքի և սրտի ստեղծագործութիւններն:

Հռովմէական շրջանի մէջ:

Յոյներուն յաջորդեցին Հռովմայեցիք: Պարթևներու հետ մղած երկար կոփներու մէջ, Հռովմի ծերակոյտն խորագիտութեամբ սիրաշահեց զՀայերն և վարուեցաւ անոնց հետ իրեւ բարեկամութեան և կալանաւորեց այս բարեկամութեան և կալանաւորեց զԱրտաւազդ, տիսրեցաւ ծերակոյտն և Օգոստոս Հրապարակի (Forum) մէջ կոչեց զայն մեծ վատահամբաւորին Հռովմական ժողովական: Օգոստոս իւր կտակի մէջ զՀայերն Հռովմայ ժողովորեան դաշնակից կը յիշէ: Այսքան գիտէին աշխարհի յաղթողներն գնահատել հայ ցեղի բարձր յատկութիւններն և յարգել զանոնք զիրենք շրջապատող ազգերէն: Հայն արհամարհեց Հռովմի զինուց տիրապետութիւնն և կոռւեցաւ, Հայաստան երբեք հաստատուն հռովմեական գարառ չդարձաւ, աակայն հեշտութեամբ հպատակեցաւ մտքի

տիրապետութեան, քաղաքակրթութեան և զարգացման. ահա այս է պատճառն որ Օգոստոսի ժամանակէն սկսած Հայ արցայազունք և իշխանազունք Հռովմ կը զրկուէին դաստիարակուելու, յորոց ողանք կայսեր հաճութեամբ թագ կապելով դարձան կառավարելու զՀայաստան. որոց ի միջի այլոց կղովիոս կայսրն Միհըրդաս թագակապին ուղղելով խօսքն կ'ըսէ. «Մի մոտածեր իշխելու այն ժողովուրդի վրայ իրեւ գերիներու, այլ պիտի կառավարես իրեւ քաղաքացիներ, զթութեամբ և արդարութեամբ¹»: Երբ քսան դար յառաջ Հայերն իրեւ դաշնակից և բարեկամ հռովմի ժողովրդեան, կը խրատուին զթութեամբ և արդարութեամբ կառավարելու իրենց հպատակներն, քսան դար յետոյ Բօշերն և Թուրքերն անզթութեամբ և անիրաւութեամբ ուղեցին բնաջինջ ընել զայն. Ո՛վ ժամանակներ, ո՛վ բարքեր:

Եկեղեցւոյ անդրանիկը:

Ցաւիտենսական քաղաքն Հռովմ, երբէք

1. Տակիտ. Տարէգերք:
Հայկ, Մեմամարտը

հանգէպ ուրիշ ազգերու չէր ուզած ճանաչել եղայրութեան , հաւասարութեան և ազատութեան սկզբունքներն : Նա ըստ Վիրագիլեան զուրցուածքին՝ ծնած էր զազգեր կառավարելու . ինքն էր տէր և իշխան, ուրիշներն իրաւազուրկ հպատակներ էին : Միայն ազատ Հռովմայեցին էր, օտար ազգեր գերի համարուած էին :

Երբ աստուածամարդն Յիսուս երկցաւ Հրէսաստան, Պիղատոս մի անգամ առիթ ունեցաւ խօսելու Անմեղի հետ . ճշմարտութեան անունը լսեց խոռվեցաւ, որովհետեւ իւր ականջներն սովոր էին լսել ստրուկներու կեղծաւոր և ստապատիր դրուատիք: Հարցուց թէ՝ ի՞նչ է ճշմարտութիւնն . իսակոյն օձի պէս խցեց ականջն և չ'ուզեց մնալ Յիսուսի պատասխանին: Եւ սակայն Փրկչի խօսքն երեք դարու ընթացքի մէջ, աւելի մեծացաւ և արձակեց ճիւղեր, բան զհատն մանանխոյ, որոյ վրայ ոչ թէ թըռչուչունք երկնից պիտի հանգչէին յոստս նորա, այլ ամենայն աշխատեալը և բեռնաւորք, որոնք երկրաւոր բռնաւորներու և հռովմէական երկաթէ բռունցքի տակ կը հեծէին, կրկէսներու մէջ գազաններէն կը յօշուուէին:

Տառապած մարդկութեան բարերարի և ազատարարի խօսքը, առաջին անգամ պաշտօնապէս Հայաստանի մէջ հրատարակուեցաւ: Իբր մի ազգի, մի պետութեան դաւանանք, Խաչի Ս. Նշանն Գրիգորով և Տրդատով ծածանեցաւ Հայաստանի սահմաններու վրայ: Հայք եղան Եկեղեցւոյ անդրանիկը: Հայաստանի այս հրաշագործ քայլն դէպ ի լոյս, դէպ ի ճշմարտութիւն, դէպ ի արդարութիւնն, ունեցած է անշուշտ իւր բարելար ազդեցութիւնն կոստանդիանոսի մտքի վրայ, որ այլ և այլ գեղեռումներէ վերջ Յ13ին հրատարակեց Միլանու հռովմարտակն: Վրիստոնէութիւնը հսկայ նուաճումներ ըրած էր ի Սպանիա և առաւելապէս ի Ֆաղգիա. չոն ծնունդ առաւ լապարումն, որ եղաւ Նշան ազատութեան: Կոստանդիանոս, դեռ հռովմայեցի էր, երբ քաղաքական ազատութիւն շնորհեց խղճի, կրօնքի, և հաւասարութիւն իրաւունքի անոնց՝ որ հռովմայեցի չէին: Քրիստոնէութիւնն ազատ ասպարէզի վրայ տարաւ յաղթութիւնը հեթանոսութեան դէմ: Սակայն, յիւմարտրիւն թուեցաւ շատերուն խակզբան՝ կոստանդիանոսի առած քայլն ի շնորհս կրօնական ազա-

տութեան, հակառակ Հոռվմի Աենատի
բռնակալ և անտեղիտալի կամքին: Հեթա-
նոսութիւնն յուսահատական կռուի պատ-
րաստուեցաւ. երկու ճակատամարտ տեղի
ունեցան, երկուքի մէջ ալ Հայերն ապա-
հովեցին վերջնական յաղթութիւնն: Հոռվ-
մի ծերակոյտն յոյսն դրած էր Լիկինիոսի
վրայ, որ զրժեր էր Միլանու հրովարտա-
կին, արեւելեան գունդերով շարժեցաւ կոս-
տանդիանոսի դէմ: Թիերևս վտանգուէր ի-
րաւունքի և արդարութեան յաղթանակն,
եթէ ըստ վկայութեան Եւսեբիոսի Մեծն
Տրդատ իւր քաջ զօրքերով չխորտակէր
նախ Գաղերի և ապա Լիկինոսի լէքէոն-
ներն, որով կոստանդիանոս կարողացաւ
թրակիոյ դաշտերուն մէջ վերջին հա-
րուածն կըռել Լիկինիոսի գլխուն: Բայց հե-
թանոսութիւնն դեռ չպարուուեցաւ: Յու-
լիանոս Ուրացողն՝ փորձեց Արամազդայ
գահը կըկին կապիտոլիոնի վրայ ամրա-
պնդել նախկին փառքերով. և վարպետ
ըմբշի մը պէս մրցեցաւ քրիստոնէութեան
դէմ, որոյ աւերակներու վրայ կ'ուզէր
կանգնել Հնլլենականուրիւնն: Բայց նախ
անհրաժեշտ էր վերականգնել հռովմէական
զինուց հմայքն. ուստի որոշեց Պարսից

դէմ արշաւել: Խնչպէս նախկին հռովմայեցի
կայսերը, նոյնպէս Յուլիանոս յոյսը դրած
էր Հայոց օգնութեան վրայ: Բայց Արշակ
մեր թագաւորն, հակառակ Փաւստոս Բու-
զանդացւոյ յուստեսութեան, հաւատացեալ
քրիստոնեայ էր, և Ա. Ներսէսի ազգեցու-
թեան ենթարկուած - որ գուցէ Ա. Բարսղի
հետ Աթէնքի մէջ ուսումնակից եղած էին
Յուլիանոսի - հրաժարեցաւ ձեռն տալ Ու-
րացողին. սա Տիգրիսի ափերու վրայ մա-
հացու վէրք ընդունելով հոգին փշեց,
պատմիներէն բերանը զրուած բնորոշ բա-
ցագանչութեամբն. Ով Գալիլէացի, յաղ-
թեցիր: Այնուհետև արդարապէս Խաչի
նշանն յաղթանակից և նուաճեց ծանօթ
աշխարհի ազգերը և կապեց զանոնք իրա-
ւունքի, արդարութեան և հաւասարութեան
գաղափարով և հաւաթքով: Հայն պատմա-
կանօրէն ունեցաւ իւր արժանիքն և փառն
աշխարհի վերանորոգութեան գործին մէջ:
Սակայն հիւսիսային ազգերն, մշտական
սպառնալիք էին քաղաքակրթութեան.
Վանդալներն սասանեցուցեր էին հռով-
մէական աշխարհն. հարկ էր սանձել, վտա-
րել գեղեցիկ երկրէն Խոտիայէն գայլա-
բարոյ ազգերը: Հոն կը զրկուին Ներսէս

և Այսակ Պատրիկիներն, հայ հանճարն կը զսպէ զբարբարուներն. երկու քաջերն արդ կը հանգչին Հռավեննայի Ս. Վիտալէ չնաշշարհիկ եկեղեցոյ մէջ: Թերեւս Ներսէս Պատրիկին խելքին և քաջութեանն արատ մը համարուի, որ Լոնգորաբարդացիներն հրաւիրեց տիրելու Խոտալիոյ. սակայն ոչ վատութեան կամ թշնամութեան համար, այլ արդար վրէժինողութեան մը համար, խենէշթագուհոյ ծաղրածութիւնները պատժելու համար. ասով Ներսէս աւելի ատելուն համար զկայսրուհին՝ նուազ սիրեց զիտալիա:

Ահա եօթներորդ դարուն կայսրութեան արևելքի սահմաններն ուսնակոխ եղած էին Պարսից ասպատակներէն: Խոսրովի գունդերն մշտական վտանգ կը սպառնային նոր Հռովմին. Պարսիկը և Բուլղարը կայսերական քաղաքի պարիսպներն կը ծեծէին: Քրիստոնէութիւնն և քաղաքակրթութիւնն ի վտանգի էին: Թէ քաղաքական և թէ զինուորական ոյժերն մեղկացած, ջլատուած էին՝ անկումն ահաւոր էր, վերականգնումն անյուսալի: Ահա այդ քաղաքորոշ ըոսէին մի Հայու հանճարն և կորովը կը փրկէ զկայսրութիւնն կործանումէ, և կ'ազատէ ջնջումէ յոյն-

հոռվմէական քաղաքակրթութիւնն: Կոստանդիանոսի հաւասար, Ս. Խաչի փառքն կը բարձրացնէ Հերակլ, որ մարմնոյ կորովով և արութեամբ հաւասար էր իւր անուանակիր հին դիցազին: Եօթը տարի արքունիքէն հեռու իւր զօրաց մէջ կ'ապրի, ամենքին օրինակ տալով չարքաշութեան և հրահանգելով ռազմական արուեստին մէջ. այնուհետև մէկ թափով վանելով վկանդելով Պարսից բանակներն, Քրիստոսի Սուրբ խաչն յաղթանակաւ կը վերադարձնէ Երուսաղէմ, որոյ տօնն հանդիսապէս կը կատարէ կաթողիկէ եկեղեցին մինչև ցայսօր: Հայազարմ կայսեր յաղթութիւնները վերջին փայլն եղան հոռվմէական մեծութեան:

Հայերն դէմ առ դէմ խլամ աշխարհին:

Պարսից տէրութիւնն և իշխանութիւնն՝ խարխուլ վիճակի մէջ կը գտնուէին, երբ մահմետական բանակները Արարիոյ խորերէն, սև հեղեղի պէս կը ճապաղին երկուցի բաժնուած. մէկ թեն կ'անցնի կարմիր ծով՝ կը նուաճէ զԵզիպտոս, կիւրենիա, Մալրիտանիա, կը թեսակոխէ ՃիմլրաԱթար,

կը տիրէ Ապանիոյ, երկար դարեր ստըրակութեան մէջ պահելու համար. կ'անցնի Գաղղիա, բայց Շալոնի դաշտի մէջ, կարլոս Մարտէլի բազկէն այնպէս կը ջախջախուեն հրոսակներու գանկերն, որ այլ ևս չեն կանգնիր. ասով փրկուած էր Եւրոպա: Միւս թեն կը շարժի Պարսից դէմ, որ զրեթէ անձնատուր կը լինի, Ընդունելով իսլամութիւն: Տաճիկ ասպատակներն կ'ընդհարին Հայաստանի կրանիդեայ պատուարներուն: Հասան սարակինոսք ամենի ալիքներու նման, գլորեցին քանդեցին մեր սուրբ քարինք. սակայն իրենք ալ փշուեցան. եթէ Հայերն կուլային, մահմէտականներն չէին ծիծաղեր: Այն կենսունակ բեկորներէն վերականգնեցաւ Բագրատունեաց թագաւորութիւնն: Երկու դար Հայաստանն միայն կուրծքը տուած էր թէ՛ արաբներու և թէ՛ թաթարներու հարուածներուն դէմ: Աւելի յաղթողքան յաղթուած՝ կը շարունակէր իւր քաղաքակրթութեան յառաջապահի գերն պատուվ կատարել. մինչդեռ Յաւիտենական քաղաքն, Հռովմ, անոնց հրոյ և սրոյ ճարակ եղաւ: Դեռ հինաւուրց մայրաքաղի աւերակներն կը սոսկան լսելով

Տաճիկ անունն: դեռ չորս կամ հինգ տարի առաջ Սարակինուներէն աւարած Ա. Պետրոսի նախագաւթի ականակուռարծաթի ջահինակն՝ երկաթաշէն կախուեցաւ: Գիշերական խուճապ դարձերէին ամբողջ Եւրոպիոյ:

Բազրատունեաց փոքրիկ թագաւորութեան մեծ արժանիքը զնահատելու համար, բաւական է մտածել իրենց մայրաքաղաքի շքեղութիւնն, փարթամութիւնն, զիտութեանց և արուեստից զարգացումն. պէտք է նկատել զԱնին իւր փառաց մէջ. զինքը շրջապատող իւտաւր անապատ իւլամ աշխարհի հետ բաղդատելով: Հայմիտքը ոչ միայն զՀայաստան կանգուն կը պահէր բարբարոսաց դէմ մարտնչելով, այլ պայծառացաւ նաև Վոսփորի ափերուն վրայ. միջին դարու Բիւզանդական լաւագոյն կայսրներն Հայազգի էին, բոլոր զինուորութիւնն և բարձր պաշտօնէութիւնը հայերու ձեռքը անցեր էին. և եթէ յոյն նախանձը ներէր, և չդաւաճանէին հայ ցեղին, թերեւս կ. Պօլիս Սուլթաններու մայրաքաղաք չգառնար: Ներքին և արտաքին պատճառներու երեսէն, թուրքերուն սարսափ ազդող Անին, ինկաւ Սել-

Ճուգեան թաթարներու ձեռքն, անով մեր-
ձեցաւ նաև թիւզանդական կայսերութեան
օրհասն:

Հայերն եւ Խաչակիրներն մարտակից հա-
սարակաց թշնամիի դէմ:

Հայ իշխանութիւնն և տիրապետութիւնն
խլուելով հայրենի հողէն, գողցես և նա-
խախնամութեան ձեռքով, փոխադրուե-
ցաւ Տաւրոսի լեռնաշղթաներու անմատ-
չելի բարձանց վրայ. յաւիտենական կիր-
ճերուն պահապաններ լինելու, ապահո-
վելու համար արևմտեան քաղաքակըր-
թութիւնն, կոռուելով երկու ճակատի վրայ
հասարակաց թշնամոյն դէմ, որ էին եր-
կու մուսուլման աշխարհներն՝ թաթարա-
կանն և արարականն: Խաւարամիտ տղի-
տութեան ամպերն մեծ մասամբ ծածկեր
էին Փոքր Ասիոյ լաւագոյն գաւառներն
Միջագետք և Սուրբ երկիրը: Փրկչի տնօ-
րինական տեղիք պղծուած էին, անօրի-
նաց լծի տակ կը տառապէին քրիստո-
նեայք: Արևմտեան Խաչապաշտ աշխարհն
զգաց ամօթն և անարգանքն. սուրբ նա-
խանձով լցուած զէնքի դիմեցին: Պատուա-

կան զինուորութիւնն կոփրետոսի առաջ-
նորդութեամբ, անհուն նեղութեամբ ծան-
րացայլ անցնելով դարանակալ երկիրնե-
րէ, Խաչակիր բանակն կիլիկիոյ դռները
կը հասնի: Իկոնիոյ դաշտերու մէջ հիւծած,
ուժասպառ մարտիկներն սարսափի մէջ
կ'ինկնան թէ ինչպէս անցնէին այն կիր-
ճերէն, որոյ արգելքն ոչ թէ լոկ մի Գոր-
դեան հանգոյց էր, այլ քաջակորով Հայոց
բազմաթիւ սուրերն ու նիզակներն, ձողա-
չափ նետերն. որոց համն առեր էին Քիսե-
նոփոնի Յոյներն, Հոռվմայեցիներն և ան-
հաւատներն: Կոփրետոս իւր բանակովն
ճգնաժամի մէջ էր, բոլոր Եւրոպիոյ ազգե-
րու պատիւն վտանգուած էր, քրիստոնէու-
թիւնն պարտութիւն պիտի կրէր իսլամ
աշխարհէն: Եթէ Հայերն զաւաճանէին ի-
րենց քրիստոնեայ եղբայրներուն, - ինչպէս
այն ժամանակ և առ յապայ, քաղցր հնչեց
Հայու բերանն այս կոչումն - ո՛հ չարա-
գոյն կերպով կոփրետոսի բանակն կը
ոչնչանար քան Պետրոս Անապատականի-
նը Հունգարիոյ և Թրակիոյ դաշտերուն
մէջ: Ոչ. Հայն զարերով Արևմուտքէն ի-
րեն յանձնուած յառաջապահի զերն պա-
տուով ուզեց կատարել այս անգամ ևս,

առանց շահախնդրութեան, առանց ստոր սակարկութեանց, առանց որ և է պայմանի. վեհանձնութիւն և մարդասիրութիւն սիրող Հայն, բնաւ իրեն թոյլ չափատի տար շահագործել իշր եղրօր անձկութիւնն, կարօտութիւնն և կեանքի վրտանզն: Կոփրետոսի վարանամիտ և կասկածոտ պատուիրակներն, կը դառնան աւետաւոր Խաչակիր բանակին. «Հայերն մեր եղրայրներն են, մեր հաւատարիմ բարեկամները»: Խօսքերնին դեռ բերաննին է, կոստանդին իշխանի պատուիրակներն իրեւ միսիթարիչ հրեշտակներ կը հասնին կոփրետոսի առկայծեալ լապտերին լուսատու յոյսն մատակարարելու: Հայ իշխաններն, քահանայութիւնն, քաջակորով զօրքն և ժողովուրդն, քրիստոնեայ եղբարց օգնելու նույիրուած են: Անոնք կը կերակրեն, անոնք կ'առաջնորդեն զարանակալ կիրճերէն, յառաջապահ կը քալեն խոշտանգուած և պարտասած բանակի առջեն մինչև Անտիոք և մինչև ապահով յաղուրեան ձանապարհի վրայ չըրած դէպի Ա. քաղաքն Երուսաղէմ, յետ չեն դառնար:

Գերեզմանք խաչակրաց կը բողոքեն:

Հայոց մատուցած ծառայութեանց արժանիքն և արդիւնքն՝ արևելեան խաչակրաց արշաւանքներու զարաշրջանին, կը սիրենք կարգալ Գրիփոր ԺԴ Քահանայապետի Հայոց ի պատիւ զրած նամակին մէջ. նա իւր թարմութիւնն դեռ կորմնցուցած չէ:

Իսկ մեզ ներկայ բոպէին կը մնայ դառնապէս խորհրդածել, որ Հայու ճակատագրական աղէտի հանդէպ, մարտիրոս ժողովրեան մը անմեղ արիւնով ազատութիւն և անկախութիւն կնքուելու ժամուն, դեռ թուրքական զերակշոռդ սէր մը և համակրութիւն կը նկատուի կոփրետոսի, Առիւծասիրա Հռիբարտոսի, Տանգրէտի սերունդներուն քով: Խաչակրաց բոլոր գիւցազներն իրենց զերեզմաններու մէջ տագնապի և քրտինքի մէջ են, տեսնալով իրենց ազատարարներու և բարերարներու որդիքը այսպէս անողորմ բնաջինջ եղած, և մնացածներուն կը ժխտուի ունենալ ազատ և անկախ հայրենիք մը: Քրիստոնեայ արևելքն սրբուելու է ընդ միշտ անհա-

ւատներէն, իրաւունք և արդարութիւն զայդ
կը պահանջեն: Բիրտ ոյժն և բարբարու-
սութիւնն ուզեց և կրցաւ ջնջել այնքան
ազատ և քաղաքակրթուած ազգեր՝ թուրքն,
արեան մէջ խեղդեց արևելեան ազգերու
ձայնը որ օգնութիւն կը խնդրէին ազատ
և հզօր Եւրոպայէն, և միթէ այսօր անկա-
րող պիտի գտնուի յաղթուած և բայ-
քայուած թուրքին զսպել, մաքրել հա-
շիներն, և վերադարձնել ընկճուածնե-
րուն՝ իրենց հայրենիքը, իրենց ազատու-
թիւնն:

Թող չմոռնան, որոց պարտքն է ար-
դարութեամբ և իրաւամբ դատել և վճռել
փոքր ազգերու բաղդն և վիճակն, որ Ռու-
բինեան փոքրիկ թագաւորութիւնն զոհ
եղաւ մահմետական աշխարհի նախանձուն
և ատելութեանն՝ զոր ունէին առ արև-
մբտեայս, ի մասնաւորի առ Գաղղիս, իրեւ
պաշտպան արևելքի քրիստոնէից: Ռու-
բինեան թագաւորութիւնն չուզեց խզել ի-
րեն յարաբերութիւնն արևմուտքի հետ, չու-
զեց դաւաճանել քրիստոսական կրօնքին,
և մինչև վերջ կոռւելով ինկաւ իւր նիզակի
և ասպարի վրայ. նաև ի մահուն պաշտ-
պանելով իւր հայրենի սահմաններն, զրկե-

լով իւր մաքուր արիւնով սրբագործուած
հողն, կարծես թէ զուշակելով թէ օր մը
այդ արիւնէն՝ պիտի վերաբուսնի ազա-
տութիւնն, և դարձեալ թագավորուի Ա-
ռիւծն խաչազէն պիտի դատնայ իւր թա-
գաւորութեան տէր և իշխան:

Հայու եղբայրական օգնութիւնը:

Երբ մահմետականութեան թանձրամած
մառախուզն ծածկեց Հայաստան երկիրն և
առիւծասիրտն կիլիկիա. երբ ամբողջ Եւ-
րոպայ աշխարհ թողլքած զարկելքի քրիս-
տոնեայք մարդախոշոշ բռնաւորի ձեռքն,
այն մահաշունչ վայրկեաններուն մէջ, դեռ
Հայը կ'ապրէր կռուելով իւր գոյութեան
պաշտպանութեան համար, դեռ Հայը կ'ե-
րազէր զարթնող Եւրոպան որ նոր խա-
չակիրներ զրկէ իրեն օգնութեան: Ուս-
տի երբ կռիւ կը ծագէր խաւարի և լոյ-
սի միջև, երբ արևմտեայ քաղաքակրթու-
թիւնն վտանգի կ'ենթարկուէր յաւիտե-
նական բարբարոսներու կողմէն, հոն ներ-
կայ էր Հայն, պատրաստ մարդկութեան
դատին պաշտպանութեան՝ խելքով և զոր-
ծով մասնակցելու:

Տեսէք Աղրիականի այլասիրտ Դշխոյն,
Ռուբինեան թագաւորութեան ժառանգն և
արևմտեան քաղաքակրթութեան պա-
տուարն թուրքի դէմ, օրհասական կռուի
է բռնուած կրետէի ջրերու մէջ։ Յաւ ի
սիրտ պէտք է ասել թէ Եւրոպայի վե-
հապետներն իրենք իրենց դաւաճանեցին՝
Թուրքի հետ դաշնակցելով վենետիոյ դէմ,
կործանելու ծովերու Տիրուհին։ Անհաւա-
սար կռուի մէջ՝ ահաւոր ճգնաժամ մը
կ'անցընէր Սերենիստիման։ Ինչպէս ան-
զլիականը մեր օրերը, այն ժամանակ թուր-
քական նաւատորմիզն բռներ էր ծովերն,
սովի մատնելու զվենետիկ. ահա այդ պա-
հուն մի միայն Հայը գտնուեցաւ կարեկից
և սրտցաւ իր արևմտեան եղբարց, մար-
դասէր Հասարակապետութեանն, երբեմնի
բարեկամին կիլիկիոյ թագաւորութեան։ Ա-
հաւոր էր թուրքաց զօրութիւնն, սակայն
Հայ վաճառականներ, արհամարհելով ա-
մենայն վտանգ, մահը աչք առած, վե-
նետիոյ պարենաւորման ծանրութիւնն թե-
թեցուցին, հացահատիկ հասցնելով սո-
ված ժողովրդեան։ Վենետիկեան Հասարա-
կապետութիւնն շնորհապարտ Հայոց մա-
տուցած ծառայութեանն, իւր դիւանական
թղթերու մէջ զայն ազմիւ ազդ կոչեց։

Հայրենազուրկ Հայն իւր գաղթավայ-
րերու մէջ անզամ փայլեցաւ քաղաքա-
կրթութեսն և զարգացման զործի մէջ։
Փոքր Ռուսսիան (այժմու Ուքրայինան) իւր
քրիստոնէութիւնն և քաղաքակրթութիւնը
կը պարտի Անտոյ հայկական գաղութին։
Լեհաստանի մէջ մինչև ցարդ ժողովրդեան
առած է, պատուաւոր մարդ մը ըսկելու
համար՝ կ'ըսկեն։ Հայ մ'է Վենետիկեան գա-
ղութն անխզելի պահեց արևելքի հետ իւր
յարաբերութիւններն և փայլեցաւ Վենետ-
իոյ թուրքի դէմ կռու մղած Լեպանտոյի
ճակատազրական ծովամարտի ժամանակ։
Կատաղի և արևմարբու Սէլիմ Բ. երա-
զեց Մէհմէտ Բի պէս, Վենետիկն ընել
իւր երկրորդ աթոռանիստն և Ա. Մարկոսի
տաճարն զուգորդել Ա. Սովիիայի, կանգ-
նելով ի նմա թուրքի մահիկն։ Եւրոպայ
ողջոյն ահի և զողի մէջ էին. Վենետիկ
իւր ամրող մարտական կազմութեամբ՝
փութաց փառաց դաշտի վրայ դիմաւորելու
բարբարոս թշնամիին Լեպանտոյի ջրերու
մէջ։ Երկինք մարտակից էր քրիստոնեայ
բանակին։ Պատմական զուգաղիպութեամբ
Հայ Գուիլիոս մը, Անտոն անուն, հա-
մանման ազուաց զործից մը հնարած լինե-
չայկ. Մեթամարտը

լով, ի գործ զրուեցաւ վենետկեան տորմղի կողմէն, որով թուրքի ցոկանաւերն ահշարժ կը բռնուէին, և քրիստոնեայք սանդուխներով վերելակելով՝ կորուստի կը մատնէին զնաւն և մէջինները. քառասուն հազար թուրք ջարդուեցան, քրիստոնեայ բանակն վերջնական յաղթութիւնն տարած էր: Եւրոպական ժողովուրդներն, ի մասնաւորի իտալիան ազատ չունչ քաշեց: Մէկ հայ մը կը յիշուի. թէ և մէկ էր, այլ իշխան մ'էր: Սակայն դեռ Եւրոպայ թուրքի սպառնալիքի տակ է: Մուստաֆայ Փաշայի բանակն վիճննայի պարիսպներու տակ, դիւական զուարձութեամբ կը կաքաւէ վաղուեան յաղթանակին համար: Երբէք մտքէն չէր անցուցած Յ. Սորիեսկու շառափնաթափ սուսերի հարուածն. ուժգին բախումէն կը սասանին դահիճներն, և ջարդուկոտոր կը փոռին դիւակներն յաղթողի ձիու սմբակներու տակ. հոն են հինգ հազար Հայ քաջեր, խառն կը խոցեն, խառն կը հարկանեն. կորովի բազուկներու մէկ հարուածով թուրքի գլուխներ գտակներու պէս կը զլորտկին գետնի երես: Վիճննայի և Քրիստոնէութեան ազատարի գերագոյն պատոյն՝ մասնակից և

գործակից եղաւ. Սորիեսկուն՝ մի միայն Հայը ազգը:

Թուրքի օրիասն կը մօտենայ:

Այնուհետև Եւրոպայ երթալով զօրացաւ, նոր նուաճումներ ձեռք բերաւ թուրքական տիրապետութիւնից, որ երթալով տկարացաւ և վատթարացաւ մինչև ինկաւ հիւանդ մարդու կացութեան մէջ: Նա իւր առաջջութիւնը պիտի փնտոէր գտնալ արեան բաղանիքներ պատրաստելով, աւելի խելացի, խաղաղ, աշխատասէր և բարեկիրթ հպատակ ազգերէն:

Երկրի երեսի ազգերը, նախապատմական մաստողնտ և իստիոսաւրոս հսկայ անասուններու պէս, զօրաւորը զտկարն կուլ տալով կամ ձուլելով իւր մէջ, իրենց տիրապետութիւնն կուզէին ընդարձակել: Հիւանդ մարդը ամենցի ախորժակ գրգռողն էր: Հիւսիսային Արջն, արևելեան քրիստոնէութեան պաշտպանի դիմակի տակ, սրագործութեան դիմեց՝ դարերով արևելքի սրտի մէջ բացուած վէրքն՝ թուրքական նեղսութենէն սրբելու. բայց եւրոպական դիւանագիտութիւնն, շահասիրութիւնն՝ հի-

ւանդապահի սպիտակ շապիկներով քողարկուելով, խնամատարի գերը կատարեց, վերապահնելով իրեն այն մասերն որոնք առողջ և շահաւոր էին պաշտպան հսկաներուն։ Անոնք մեր ապագայ աղեաից սերմերն ցանեցին Հիւանդ մարդուն մէջ, ինչպէս մեծ ճանձերն իրենց ձետուկներն կը ճգնն շաղիղներու վրայ։ Մի քանի միլիոն կեանք այսօր պիտի չ'ողբար « երջանիկ Եւրոպան » եթէ նախ Ազրիանուալուսի, ապա Անաստավոլի, հուսկ Ո. Ստեֆանօսի կամ Բերլինի դաշնադրութիւնք՝ իրաւանց և արդարութեան վրայ հաստատած լինէն. այդ փառքն Ամերիկայի վերապահուած էր։

Միացած զօրութեամբ։

Այսօր պատմութեան խորանի վրայ դրուած է այս հարցը. Ո՞վ յաղթեց։ Անգլիական տորմիդն, Մարնայի դիւցացունները, թէ Ամերիկայի բազուկն։ Ստոյգ պատասխանն այս լինելու է. Ամէնքն ալ յաղթեցին։ Վասն զի ամենքի համերաշխ գործը, իւրաքանչիւր պատերազմական ճակատի վրայ՝ համընթացան ի գլուխ տանելու յաղթութիւնն։ Փոքը ուժերն անգամ

ունեցան իրենց մեծ կարևորութիւնն, ինչպէս հսկայակոյտ մերենաներու մէջ՝ մէն մի պտուտակ, մէն մի գամ՛ հարկաւոր են կանոնաւոր շարժման և գործի յառաջադիմութեան։ Հետևապէս փոքրիկ Հայ ազգի արդիւնքն ուր պէտք է փնտուել այս հսկայական մարտամբոխին մէջ, յորում հաւասարապէս կրակեցին թանկսե, մաստողնտ հրետանին և ատրճանակն։ Յիշենք մեծ պատերազմի ելեէջներու մի քանին, յորս փոխ ընդ փոխ ծիծաղեցան և լացին կռուող ազգերն։

1914ի պատերազմի առաջին օրերուն գերմանացիք հաշուեր էին Օգոստոսի 15ին Պարիս մտնել. արդէն սրարշաւ բանակներն երեսուն քիլոմետր հեռի էին քաղաքի պատնէշներէն. ամբողջ Գաղղիա սարսափի մէջ էր։ Խնդրեցին Զարէն շուտափոյթ օգնութիւն։ Մեծ իշխան Նիկոլայ կարծուածէն աւելի արագութեամք կոխեց Բլուսիոյ սահմաններն. իւր կարգին Բերլին գտնուեցաւ սպառնալիքի տակ. որով ստիպուեցաւ գերմանացին ստուար զօրաբաժիններ Գաղղիոյ ճակատէն զրկել Ուուսներու դէմ. ասով Գաղղիայ ազատ շունչ քաշեց և ժամանակ ունեցաւ անպարտելիօրէն ամրացը-

նելու զվէրդէօնն։ Այս կարևոր պարագային մօտ 150 հազար կանոնաւոր հայ զօրք Ռուս բանակի մէջ կը կռուէր հաւասարապէս գերմանացի և աւստրիահպատակ հարաւ - ալաւեան ազգերու դէմ։ Յանկալի է որ այս հանգամանքը Գաղղիացի աննկուն վագրն անտես չ'առնէ Հունուսեան և Ալգաս - Լորէնի սահմաններն գծագրած ժամանակ։

Հակառակ ուղղութեամբ գերման բանակին, անոնց աննման դաշնակից թուրքն, իւր խառնավար խուժանն մղեց դէպ ի կովկաս։ Թիֆլիզի մէջ Նոր Խալիֆայութիմ հաստատելու ցնորքով։ Հոն Ռուս քաջարի զօրքն, աջակից ունենալով թիւրմի և աւելի առիւծափրտ հայ կամաւորներն, Սարիղամիշի և Արտահանի միջն Էնվէրի երեք զօրաբաժններն անվիճելի կերպով ջախջախեցին։ Այդ հարուածը անբուժիլի մնաց բոլոր ժամանակ կովկասի ճակատի վրայ։ Թաթուլ Վանանդեցին կրկին անգամ իւր վրէժն լուծեր էր Տուղրիլականներէն։ Էնվէր և իւր ջոլիբին ընդմիշտ ցեխի մէջ խրուած պիտի մնային, եթէ Դարդանէլի անյաջող արշաւանքն չվերակենդանացնէր Թուրքի մէջ «անյաղե-

յիի» յաւակնութիւնն։ Սկսաւ ընդվզել ե ապարթանել, հող ածել զզիսովն, ըստ մեղրախօս Եղիշէի, և երկու բազուկներն երկնցուց դէպի Հնդկաստան և Եգիպտոս։ Համիսլամական ուրուականն՝ դափնիներ կը սփոէր անցնելիք ճանապարհներու վրայ։ Եւ պէտք է խոստովանել որ 1916ին, Միջազգետքի և Եգիպտոսի Անգլիական ճակատներն նախանձելի դիրքի մէջ չէին։ Ահա այդ ողբերգական պահուն՝ Հայ զընդերու անգուստ եռանդն էր, անսահման ազատութեան և վրէժի ողին էր, որ քարշեց տարաւ քաջայանդուզն Հայ կամաւորներն պարանոցաթաղ ձիւներու միջէն։ գողցես թե առած կը սաւառնին Փալանթէօքեանի բարձունքներէն, կը սողան կիրճներէն և մի առ մի քանի մը մարտկոցներն գրաւելով՝ կը իւուժեն քաղաքը, Էրզրում առնուած էր։ Իւտենիչ զօրավարն ձրիարար շորթեց դափնիներ։ Հայ կամաւորներն մնացին ստուերի մէջ, դիւցազուններու անունները Խոչեմութելլն համար առժամն չ'ուզեց հրատարակել մեծ իշխան Նիկոլայ, որ կովկասու ճակատի գերազոյն հրամանատարն էր։ Կարինէն ոռու բանակն երկու թերի բաժնուած դէպ ի Երզրու-

կեան և Տրապիզոն յառաջեց. երկու քաղաքներն մին միւսի ետևէն ինկան Ռուսաց ձեռքը: Ֆոն դէր Գոլց գլուխն վրայ տուաւ. գերման արծիւն սկսաւ խոնարհիլ այլ ևս չքարձրանալու համար: Շիւար և սարսափ պատեց Պօլսոյ արքունիքն. մոռացան Եգիպտական ճակատն, ուժերնին կեղրոնացուցին մայրաքաղաքը ապահովելու Ռուս վտանգին դէմ: Բաղդն կրկին ծիծաղեցաւ Ալբիոնի, Եգիպտոս ընդ միշտ ազատած էր Թուրքի սպառնալիքն, իսլամութեան կանաչ նշանն դարձաւ իւր թարսուցն. Եգիպտոսի նոր Սուլթանով ամրապնդեց իւր գերիշխանութիւնը: Զափազանցութիւն չպիտի համարուի, եթէ պաշտպանենք որ այս ճակատի բարեշը ջութեան յաջողութեանց մէջ՝ Հայ զինուորն փառքի մէկ կարեոր մասն ունեցած չ'ըլլայ:

Մինչև 1917 Ապրիւ ամիսը, Հայաստանն իւր որդիքներով կռուեցաւ զօրութենաբար իրրե դաշնակից երեք մեծ պետութեանց, ցանուած ցրուած ոռուական հսկայ բանակի շարքերու մէջ. սակայն զնահատելու ժամանակ՝ նա իւր էութիւնը չի կորցներ բնաւ: Վասն զի եթէ քաղա-

քական դիտումներով Զարի տէրութիւնն 1886ի զինուորազրութենէն յետոյ, հայերէն կազմած Արտահանի գունդի չցըռուէր կանուխէն, հետ զհետէ աճելով հայկական գունդերն, 1914ին կարող պիտի ըլլային առանձնակ հարիւր յիսուն հազարի բանակ մը պատերազմի դաշտը դրկել, գրեթէ կիսով չափ աւելի քան Պելճիական անպարտելի զումարտակները: Լութեամբ կ'անցնիմ Վանի բանակին ընկերացող կամաւորներն, որոնք մէկ թափով հասան Տիգրանակերտի գուներն, և զո՞ն զնացին խարդախ ուազմագիտական նահանջի մը, ուրինկան քաջակորով Քեռին և ընկերները:

Հայկական բանակի նշանակութիւնն:

Հայկական բանակի գոյութիւնն երեանեկաւ ոռուած տէրութեան և բանակի քայլայմանէն յետոյ: Ռուս դասալիք զինուորներու դատարկն լրացուցին հայ զինուորութիւնն և կովկասեան ճակատի պաշտպանութիւնն իրենց վրայ առին: Այն միջոցին կովկասի մէջ կազմուեցաւ Հայ-Վրացի - Թաթարական դաշնակցութիւն մը: Հայոց ազգեցութիւնը գերակիո տեղ

գրաւեց կովկասի գործերու մէջ։ Գաղղիացի սպաներ այցելելով կովկասի ճակատն, հիացեր էին հայկական զինուորներու մարտական կազմին և տեսքին։ Անոնք կը խոստանային չժողովրել Դաշնակիցներու դատն՝ այդ կարևոր ճակատի վրայ։ Դըժբաղդաբար Ռուսական Բօլշևիզմի խորապէս ցնցեց և խրամատեց ամբողջ Ռուսքանակի կազմն։ Դաւաճանեցին իրենց դաշնակիցներուն, և մատնեցին թշնամոյն նախկին բարեկամներու դաշինքներն։ Գերմանիոյ պատրաստած յեղափոխական թոյնն վարակեց ամբողջ Ռուսաստանի մարմինն, և դարձուց անզգայ դէպի ի կոուլ կողմերն, արենելեան ճակատն դադարեցաւ գոյութիւն ունենալէ։ Գերմանիա թիկունքէն ապահոված, իւր ամբողջ զօրութեամբ դարձաւ արեմտեան ճակատի վրայ։ Վեց ամսի չափ ահեղակերպ կազմութեամբ կը պատրաստուէր 1918 Մարտի 21ի յարձակմանն։

Գերմանիա միւս կողմէն քայքայիչ դիւնագիտութեամբ թափանցեց Ռուսաստանի ներքին խաւերու մէջ։ ամէն կողմ կը վխտային իւր մարդորս գործակատարներն։ Բռնաւորներն խաւար տարրի մէջ

այնպէս յաջողութիւն կը գտնեն, որքան սունկն աղբըուկ տեղերու վրայ։ Նա գէպի ի Հնդկաստան նոր անցքեր կը փրնաւըուէր։ Կովկասեան երկաթուղիք Բաթումէն գէպի ի Բագու և գէպի ի Ճուղիք, թովիչ հրապոյր մը ունեցան և ձգեցին զՑետոններն հոն։ Թաթար և Վրացի տարրն՝ թովիչներու ազգեցութեան տակ՝ մազնիսական քնոյ մէջ եղողի պէս, սկսան հակառակ գործել իրենց դաշնակից հայերուն։ Վասն զի զլացան ազատ անցք թողուլ իրենց հողի վրայէն գէպի ի Պարսկաստան։ Վրացիք 1918 Յունուարին գաղտնի դաշնկնելով գերմանացոց հետ, բաւրական զօրաբաժին մը երեցաւ թիֆլիզի մէջ։ Թաթարներն հետեւեցան Վրաց և հրաւերեցին զԺամիկներն ի կովկաս։ Հայերն մնացին երկու սուրի մէջ։ Օգնութիւն աղերսեցին դաշնակիցներէն, ի զուր։ Վասն զի գերմանացիք ահաւոր յարձակողականը սկսել էին Ֆիւնդրոյ ճակատի վրայ։ իսկ թուրքերն յոյս գնելով Վրաց և Թաթարաց օգնութեան վրայ, երկու բանակ սկսել էին շարժել գէպի ի կարին։ Ոմբողջ կովկասու հայութիւնն՝ բնաջնջման վտանգի և տագնապի մէջ սոսկալի վայրկեաններ կ'ան-

ցնէր։ Վլրաց գաղտնի դաշնադրութիւնն հսկիւ Հայերուն յայտնի կը լինի ապրիլ ամսի մէջ։ Առաջին զայրոյթին յետոյ, սոսկումն կը զգան բարբարոսէն, իրենց դարաւոր անհաշտ զահիճէն, հաշտութիւն խնդրել. սակայն ոչ մի հնար չկայ խուսափելու այդ դառն բաժակէն։ Հայերն կ. Փօլիս և ի Բերլին պատգամաւորներ կը դրկեն հաշտութիւն կնքելու։ Թուրքն աւելի « մարդասիրաբար » կ'ընդունի Հայ պատգամաւորութիւնն՝ քան կոչտուրական գերմանացին։ Եիկամօրուս Փրեերիկոսիթունն, ուղեցին կրկին անգամ Հայում մացորդն արեան մէջ խեղդել. այն քաջերու ժառանգներն, որոնց Սարոսի յորձանուտ ջրերու միջէն, իրենց կայսեր ջրախեղդ դիակն ցամաց քաշեցին. որ չպիտի կորցնէր կեանքն՝ եթէ հաւատար իւր անձի պահպանութիւնն՝ տաւրոսաբնակ առիւծներու բազկին։ Ո՛հ, պատմութեան փոխանակումներ։

Անմերելի նոգերանութիւն։

Դամոկլեան երկսայրի սրի տակ Մայիսի
28ին Հայու կնքած հաշտութիւնն, թուրքի

հետ դառնապէս քննադատեցին ինչ ինչ թերթեր Գաղղիոյ և Անգլիոյ, դաւաճանութեան մուլն քսելով հայ ամբիծ ճակատին։ Անհասկանալի է մեզ համար այդ հոգերանութիւնն. անողոք և աններող դէպ ի փոքրիկ ազգ մը, ընկճուած և հարստահարուած և բարբարոսաց հաստօղակի մէջ բռնուած, որ իրեն փրկութեան միակ ճանապարհն կը փնտոէ ակամայ հաշտութեամբ։ Ինչո՞ւ նոյն դատաստանով չդատեցին նաեւ Ռումանիոյ կնքած հաշտութիւնն. այլ համակրանք, ամեն կողմէ կարեկցութիւն պարտելոց, գովեստներ դիւցազնութեան, խոստումներ վերականգնելու և վարձատրելու, եթէ վերջնականապէս խորակուին թշնամիներն, բարբարոսներն։ Ռումանիա անձնատուր լինելն յետոյ, թող որ այնքան աւար և կողոպուտ ձեռք ձգեց թշնամին, ոչ մի օգնութիւն չհասուց դաշնակից բանակներուն, և ոչ Սալոնիկի ճակատին։ Խակ դատուած և դատափետուած Հայը, թուրքի հետ հաշտութիւն կնքած Հայն՝ զէնքը ձեռքէն վար չըրաւ, չհպատակեցաւ, չստրկացաւ յաղթողի ձեռքի տակ. դիւանազիտական գործը կատարելէն յետոյ, իւր բանակն ոտքի վրայ պա-

հեց և զէնքը ձեռքէն վար չդրաւ։ Բանակն՝
կուող մարմինն, անհաշտ մնաց թուրքի
հետ՝ պաշտպանելով իւր հայրենիքը. հրե-
տանիներու որոտն, գնդացիրներու ճարճա-
տիւնն, հրացաններու բոմբիւնները ամբողջ
հայկական ճակատի վրայ մինչև վերջ
չլոեցին։ Բագուի թաթարներու յիղափո-
խական շարժումն՝ համիսլամական ծրա-
գրով, հայ զօրքի կողմէն իսկոյն կը զսպուէր
եթէ անոնք օգութեան չկանչէին թուրք
զօրքերը. . . .

Հայկական հակատի նշանակութիւնն։

Արարատեան Հայկական Հանրապետու-
թիւնն, Անդրանիկի բանակն՝ պարսպեր էին
Պարսկաստանի ճանապարհն։

Հայոց բռնած ճակատն երկու կարեռը
հետեանցներ ունեցաւ դաշնակիցներու հա-
մար, բայց ի մասնաւորի անզլիական Մի-
ջագետքի և Պաղեստինի ճակատներու նը-
կատմամբ։ Կարսէն սկսած մինչև ձուլֆա,
հակառակ վրաց դաւաճանութեան, պաշտ-
պանեց հայ բանակն և չթողուց թուր-
քի խուժանին միանալ Ատրպատականի
խազմարարներու հետ։ Այլրարատեան նու-

րակազմ իշխանութիւնն՝ Բելճիոյ դերը կա-
տարեց, զոգ երեք ամիս, թուրքական յա-
ռաջխաղացութեան դէմ ի Բագու՛ խոչըն-
դուներ յարուցանելով և կոռւելով։ Այս դիւ-
ցագնական պաշտպանութեան հետևանքն
այն եղաւ, որ թուրքերն բովանդակապէս
տիրելու համար կովկասին և ընկճելու
զնայերն, ստիպուեցան Միջագետքի ճա-
կատէն օգնութիւն զրկել Ատրպատականի
խազմարարներուն, որպէս զի Սիւնեաց
աշխարհն զրոհ տան. իսկ Պաղեստինի ճա-
կատէն երկու զօրաբաժին կը զրկուին կար-
սը, Արտահան, Ալեքսանդրապոլ, Գաձակ
գրաւելու և միանալու Բագուի թաթար-
ներու հետ։ Մինչ թուրքերն, վերև ակ-
նարկած Ազրիանուազօլսոյ վերստին գրա-
ւումովն սոնքացած, կարծէին նոյնցան հեշ-
տութեամբ գրաւել անզրէն զկովկաս, ան-
գլիական բանակն աւելի երագ, աւելի ճար-
պիկ գտնուեցաւ իւր շրջապատող շար-
ժումներով և մօտեցաւ Հարարայի ուզմա-
դաշտին։ Ալէմրի զօրավարն՝ կոռւի հանգոյցն
լուծուելու տեղոյն վերամարտիկ կը կար-
գէ Հայ կամաւորներու զունդն ութ հա-
զար հոգի։ Հայ զինուորներն գիտակից իւ-
րենց յանձնուած դերի մեծութեան, կ'ովս-

տեն արժանանալ աշխարհի հիացման, որ իրենք միայն խողիսողուելու ազգ չեն, այլ զիտեն նաև յաղթել՝ երբ իրեն հաւատաւ ըիմ բարեկամ սուրը ձեռքին ունենան : Խստերախ երիվարի նման, սահնձակոտող կը սուրան դաշտի երեսն, թեթևոտն կը վերելակեն բարձունքները. Գաղղիացի հրամատարն չի կարող զսպել անզուսպ եռանդն վրիժառու հայ զինուորին : Մեր երեսակայութենէն դուրս է նկարագրել բաշաց յարձակումն, բարձունքներու յաղթանակաւ զրաւումն թշնամեաց խորտակումն : Պարտուած լեղապատառ թշնամին միայն հասկացած լինելու է անոնց թափն, անոնց ոյժն, որ իրենց ամօթն ու կորանքն պարտկելու համար, մեծագոյն զովեստն տուած են զիրենք յաղթողներուն . Ինչ ընէինք ասելով. Կայծակի երազուրեամբ հասան վրանիս: Կայծակ. Կարծես հայուսեփական տիտղոսն է: Զմեզ զաւաճանող վրացին ալ վաղոց փորձած էր հայու երագութիւնն և բազկի ոյժն և ձգած սարսափն. սաքարրուկի բնակիչներու բերանն առած եղած է ասել « Հարաւայինն (Հայն) եկաւ, հետն ալ ԿԱՅԾԱԿ բերաւ ¹ ».

1. Մօլիտա սօմէխիօ, մօյիտանա սխուամէխիօ.

Այն ահաւոր կայծակն շառափնաթափ՝ Ալէմբիի բանակին մահացան հրետանիներու բոցերու հետ՝ ջարդեց, փշրեց, վառեց բարբարոսաց կազմութիւնն, բամին տարաւ Ատամբօլ տաճկական բանակի ամիւնն. օսմանեան պետութեան գերեզմանի քարն հոն կոփուեցաւ, յորում պիտի գրէ Պատմութիւնն. « Ենաւ յարենէ, կերակրուեցաւ արիւնով, խեղդեցաւ իր արեան մէջ »: Թուրքի արքունիքն անպայման անձնատուր կ'ըլլար յաղթողին :

Անմահ փառքն, անթառամ դափնիներ կորզեցին Անզլիական բանակներն. բայց չնորհակալ ենք Մեծ Ազգի մեծ զաւակներուն, որ նաև վեհանձնօրէն ճանաչեցին և գնահատեցին թէ՛ կովկասի բաջերու և թէ Հարարայի նահատակներու արդիմքն և օմանդակուրիւնն զոր մատուցին առանձին անզլիական և թէ ընդհանուր դաշնակցաց յաղթական զինուց: Ուստի վերև ասածնիս սնապարծութեամբ չէր, թէ կովկասի Հայոց ճակատին մղած կոփւները, կարեոր հետեանքներ ունեցան զաշնակից բանակներուն, Պաղեստինու ճակատի վրայ տարած վերջնական յաղթութեանը մէջ:

Հայկ. Մեմամարտը

Թէ մեր բարեկամներն և թէ թշնամի-ներն (եթէ կարող են) պէտք է խոստուվանին անկեղծաբար որ Հայ ազգի ցուցած այս կորովն, անպարտելի ոյժն՝ նախընթաց ունեցած չէ ընդհանուր պատմութեան մէջ։ Արոյ և հրոյ միջէն կոռւեցաւ ոխերիմ թշնամոյն դէմ, որ ծայրակտուր ընելով անզէն ժողովուրդ մը, փորձեց ըսպաննել Հայ կեանքն. իսկ հայկազուն քաջերն իրենց կուրծքերով միայն վանեցին զդահիճներն և ազատեցին ազգին կեանքն ու պատիւն, և նուիրագործեցին հայրենի հողն և թուրքի պղծութիւններէն սրբեցին։ Եթէ ուրեմն Ողոգարութիւնն երկնքէն իջնայ կրկին հողագնտիս վրայ, անոր առաջին գործը պիտի ըլլայ վարձատրել Հայոց նահատակութիւնն՝ հրատարակելով Հայաստանի անկախ ազատութիւնն։ Սիրեցէ՛ք զարդարութիւն ոյք դատիք զերկեր¹։

Ի՞սչ արժէք ունին խոստումները։

Այս թուրցիկ ակնարկներու մէջ փորձեցինք խտացնել Հայ ցեղի նկարագիրն

1. Խմատ. Սողոմոնի.

և կատարած գերը քաղաքակիրթ աշխարհի կոփւներուն մէջ, հանդէպ մարդկութեան յաւիտենական նախատինք բերող թուրք ցեղին։ Ուզեցինք որ Հայ ազգը հին և նոր փառքերով, սրով սրբած քրտինքովը, իբրև բարեգործ և զինուոր մուտք ունենայ այն Տաճարի մէջ, ուր հիմայ իրաւունք և Արդարութիւն պիտի յաղթանակեն։ Այն ատեանէն, արդարագատութիւն ոչ թէ մուրալու այլ պահանջելու, վստահելով որ ոչ Ռփլսըն, ոչ Կլէմանսօն և ոչ Լոյտ Ճիօրծ իրենց խոստումները թողուն որ թղթի կտորտուանքներու պէս քամին տանի։ Երբ փոքր ազգերու կը խոստանային իրաւունքն տալ տնօրինելու իրենց վիճակն, ազատութիւն հայրենիքի, Հայերն և Հայաստանն ունէին ի մտի, թէ գիւանազիտութիւնն դարձեալ իւր մտքի սեղմումներով, իւր շահասիրական գիտումներով խարոց մը չէին դներ։ Եւրոպիոյ և Ասիոյ փոքր ազգութեանց միջև։ Մենք Հայերս միամտաբար հաւատացինք և ընդունեցինք Պետական գործիչներու խօսքերն՝ իրենց բնական նշանակութեամբ։ անոր համար անպայման և անհաշիւ զոհեցինք մեր բոլոր կեանքն

այդ գաղափարի իրագործմանը։ Մենք հաւատացինք անոր համար մանաւանդ որ Ազատն Ամերիկայ իւր որդիքներով կու գար ազատութեան մարտն մղելու բարբարոս և ոճրագործ ազգերու դէմ։ անոր համար որ երբ Ուկիւլն իրաւունքի և արդարութեան զրօշն պարզեց, և թէ ինչ չու անշահասիրաբար ոտք կը կոխէր Գաղղիա, մենք յիշեցինք անոր մեծ նախորդի խօսքը, որով գաղղիական ազգի պատիւը կը յաւերժացնէր այսինքն թէ անոր զերազոյն փառքը կը կազմէր լինառած, ձեռուած ազգերու պաշտպանուրիւնն։ Եւ յիրաւի Հայ ազգն անպայման հաւատքով լցուած էր կանխաւ դէպ ի գաղղիական ազգի վեճանձն և մարդասիրական զգացումներն, վասն զի անոր ապացոյցն բազմից տուած էր անցելոյն մէջ ուղղամտութեամբ և անձնանուիրաբար։ Մեր այս համակրութեան և հաւատքի արդիւնքն էր որ պատերազմի սկիզբից վեհափառ կաթողիկոսն ամեայն Հայոց, Հայկական Պատուիրակութիւնն մը ի Պարիս հաստատեց և իրեն ներկայացուցիչ անուանեց Վահեմ. Պ. Նուպար իշխանն։ Պակայն երբ իրաւունքի և արդարութեան համար կոռուղներն յաղթեցին, թրեննու

իւր երկաթի սուրն նժարի մէջը նետեց, չ'ասաց՝ վայ յաղթուողին. այլ աւելի դժնէն, մեռիր որ ապրիմ։ Հայն խելակորոյս մնաց. այն ժամանակ միայն զգաց իւր ցաւերն և զիտեց յուսահատ աչքով իւր սկ աւելակներն, յիշեց դառնազին սրտով իւր նահատակաց ծխացող արիւններն։

իրաւունքի և Արդարութեան տաճարի հոյակապ դոներն փակուեցան իրենց երեսին, անո՞ր համար արդեօք որ Հայ ժողովուրդը միայն ոռւսական զաշնակից բանակին մէջ հարիւր յիսուն հազարով կոռւեցաւ. անո՞ր համար որ թուրքիոյ հայերն չուզեցին զաւաճանել մարդկութեան դատին, յեղափոխութիւն յառաջ բերելով կովկասու ճակատի վրայ. անո՞ր համար որ Հայ կամաւորներն թէ արևելեան և թէ արևմտեան ճակատի վրայ հաւասար ուժով և քաջութեամբ կռուեցան զաղղիական Պոռալիւներու հետ. անո՞ր համար որ Ասորիներու պէս անտեղեակ չմնացին համաշխարհի պատերազմի վերջնական նպատակին, անիմաստ կերպով չվերաբերուեցան իրաւունքի և արդարութեան պայքարին. կամ վերջապէս անո՞ր համար որ

իւկօ-Ալաւներու պէս երեք տարի արիւ-
նախում սուխներն չցցեցին դաշնակից-
ներու սրտերուն մէջ: Թող ներուին Հայուն
այդ վնասներն: Նահատակ ազգի մը դառ-
նամորմոք խոկումներն են որ անկամս
մտքէն կը բղիւն, երբ զինադադար կըն-
քուելուն և վերջնական յաղթութեան հա-
մար, Հայկական Պատուիրակութիւնն իւր
փառաբանական և շնորհաւորական հեռա-
գիրներուն գաղջ պատասխանները կ'ընդ-
ունէր Հանրապետութեան և Նախարարա-
կան Խորհրդի նախագահերէն: Անոնց բո-
վանդակութիւնն էր թէ՝ Գաղղիս կը հրա-
ժարէր մեզի վերաբերմամբ « ճնշուածներու
պաշտպանութեան փառքէն » Հայն արա-
գիլին պէս յուսախար կը հեռանար իրբե
մեղապարտ: Գաղղիսական դրամաէրերու
շահերն միացած Բիսմարքի Բոմերանիոյ
զինուորի փուած ոսկորներուն հետ, կը
սպաննան հաւասարապէս զՀայատան
մատնել դարձել Թուրքական ստրկու-
թեան. ապա թէ ոչ կը հանգուրժէին Զի-
նադադար կնքելուելէն զինի, որ հայկական
գաւառներու մէջ որ և իցէ ջարդի փորձ
ընէին Թուրքերն, և դաշնակիցներն չգրա-
էին զԹուրքիան, դրուած պայմանին հա-

մեմատ: Հալէպ, Ատանայ և այլուր տեղի
ունեցան ոչ թէ սպառնալիք, այլ բռնու-
թիւնք, արիւնչեղութիւնք, և մենք չէինք
սպասեր որ նաև կիսավայրենի ցեղեր,
մեր ջարդաբարներու կազմակերպութեամբ,
խուժէին հայ արիւնով մաքրուած հողերն
սեփականնելու, և պղծէին մեր նահատակնե-
րու նշխարներն և գերեզմանները: Միթէ
քնքշաբա՞ր պիտի վարուէին Երիտասարդ
Թուրքերու հետ, այն Վոսփորի Մարդ-
գազաններու հետ, որոնք թէ Գաղղիս և
թէ Անզիլիս կողմէն դեռ 1915է ի վեր
կոչուեցան աւազակներ, մարդասպաններ,
և իրը իսկական խազմարար, ոճրագործ
քրէական դատապարտութեան արժանիներ.
մինչ այսօր ազատ հոս հոն ծպտեալ կը
թափախին խռովութիւն և նոր ջարդեր
յառաջ բերելու համար: Եթէ Թոն Սան-
գէրմն բռնուեցաւ, որովհետև գերմանացի
էր, աւելի դիւրաւ պիտի կալանաւոր-
ւէին Լնվէրը, Թալէաթն և անոնց Զոլիքն,
որոնք գիպլոմատներու մատներու արան-
քէն կրցան պլրծնել մորթերնին և ա-
պաստանիլ Սանդէրսի հայրենիքն: Կը սի-
րենք դեռ յուսալ, որ այսցան տխուր ե-
զելութիւնք՝ ներողամտարար թոյլ տրուե-

ցան գործուելու, մեծագոյն իմաստութեամբ
մը, որոյ գաղտնիքն մեզի անյայտ է տաւ
կաւին+իբր զբրիստոնեայ ազգաբնակութիւն
ապահովագոյն պայմաններու մէջ պահելու
նպատակով, չգրգռելու օրհասական գա-
զաններն, մինչև սոսկավիթխար Տեսոն-
ներու հետ վերջացնեն հաշտութեան գործն:
Մինչև պայծառ արևու երևալն՝ ճրագի
լուսով միմիթարուփինք, որ հեռու խաւարի
միջն մեզի համար կը պլալլայ: Եւ յի-
րաւի ազգային Պատուիրակութեան վեր-
ջին լուրերն աղօթարանը բացուելուն սըր-
տապնդումներն կը յաւելուն, հաւատքնիս
կը զօրացնեն. ազգային ազատութեան
արշալոյսն կը գուշակեն. գեռ ժամանակ
մալ գողգոթայի ճանապարհն պիտի զնանք,
մինչև գայ ժամանակն երբ Մայր Հայաս-
տանն իւր որդւոց բոսրաններկ վարդապսակ
բարձերուն վրայ հանգչեցնէ զլուխն և
ասէ. Երջանի՛կ հմ:

Թուրքն անզգայ է քաղաքակրթուելու:

Համոզուելու համար թէ Հայերն արժանի
են ազատութեան, և թէ Թուրքերն պէտք
արտաքսուին Հայաստանէն հետևեալ ծա-

նօթ երկու կէտէրու վրայ կը հրաւիրենք
ընթերցողի ուշադրութիւնն:

Ա. Հայն անպայման սիրող է յառա-
ջադիմութեան:

Բ. Թուրքը անպայման թշնամի քաղա-
քակրթութեան:

Անցեալի մէջ պատկերացած է մեր ցեղի
տիպարն: Եւրոպացիք զմեզ կոչեր են յա-
ռաջաւոր Ասիոյ ամենալընդունակ տարըն և
միացնող օզակ արևելքի և արևմուտքի
միջև, քաղաքակրթութեան և լուսաւորու-
թեան ռահվիրաներ: Հայ միտքն Յոյն —
Հոռվմէական շրջանի մէջ, գտնուեցաւ իբր
իւր սեփական մթնոլորտի մէջ. անով պա-
տրաստուեցաւ մեր Ասկեղարն յորում հայ
հանճարն մրցակից հանդիսացաւ հելենա-
կանին:

Ապա դէմ առ դէմ Թուրքին՝ հինգ դար-
անընդհատ կոհւներէ և ջարդերէ վերջ, ի-
կարողութեան գտաւ տասնեակ հազաններու
գունդեր կազմել և կռուել յաղթական-
հայրենիքի և կրօնքի ազատութեան համար:

Նմանապէս անցեալի պատմութիւնը մեզ
ցոյց կու տայ թէ՝ Մուսուլման աշխարհն,
թշնամի է քրիստոնէութեան, որ է ասել
լուսոյ Բանին, յառաջադիմութեան, զար-

գացման։ Իս իւր երևմանէն ի վեր, Յոյն-
հռովմէական աշխարհի պատիժն և պա-
տուհան դարձաւ, իւր խաւարամիտ մո-
լեռանդութեամբ։ Խալամի վարդապետու-
թիւնն՝ երբեմի խաղաղ թաթարներնու
բնազդն այնքան բթացուց, մինչև դար-
ձան անընդունակ ամեն տեսակ զարգացման
և բաղաբակրթութեան։

Քրիստոնէութիւնն նախ կոռւցաւ հին
աշխարհի ամեն ազգերու հետ, զանոնք
նուաճեց՝ ազնուացուց՝ լուսաւորեց։ Ութե-
քորդ և իններորդ գարերուն՝ գերման հեթա-
նոս ազգերը խուժեցին կայսերութեան սահ-
մաններէն ներս, սակայն քրիստոնէութիւնն
շահեցաւ զանոնք և ընդունեց իւր զրկի
մէջ։ Եւրոպայի հիւսիսային ազգերն՝ Հուն-
մէական աշխարհի հետ կապուեցան աւետա-
րանի սկզբունքներով։ Խակ երբ Մահմետա-
կան աշխարհն ողողեց հեղեղաբար քրիս-
տոնեայ երկիրներն, չկարենալով զանոնք
իւր մէջ ձուլել, սկսաւ ջարդել և ջնջել։
Խակ ուր քրիստոնէութիւնն ընդհակառակն
ուժեղ գտնուեցաւ, ինչպէս ի Ապանիա, ուր
մահմետականներն ժամանակ մը տիրապե-
տեր էին, անկարելի լինելով զանոնք
բաղաբակրթել, ստիպուեցան ըստ իրենց

կարգին՝ ջարդել, զէնքով և բռնութեամբ
իրենց երկիրներէն դուրս վտարել։ Ասով
Եւրոպայ կրցաւ խաղաղ կրթական գործն
յառաջ վարել, զարգանալ և ուժեղանալ
այն աստիճանի՝ մինչև որ թուրքն սկսաւ
պատկառիլ, վախել և կասկածիլ իւր գոյու-
թեան մասին։

Հասաւ հիմայ անոր ալ կարգն արտաք-
սուելու այն քրիստոնեայ երկիրներէն, ուր
երբեմն բաղաբակրթութիւն, արուեստ,
գպրութիւնք, զիտութիւնք զեղեցկապէս
ծաղկած էին և հիմայ դարձեր են խոպան
անապատներ։

Ուիլսնի ասածը, ո՞չ ազգերու ընկե-
րակցութիւնն և ո՞չ հաստատուն խաղա-
ղութիւն կրնայ յաջողիլ, բանի որ Դիւա-
նագիտութիւնն զարձեալ կը հովանաւորէ
թուրք տարրին, և անոր գերիշխանութեան
տակ պիտի մնայ Հայն, քրիստոնեայն,
զրկուած ազատութենէ և ամէն բաղա-
բացիական իրաւունքներէ. Թուրքն թուրք
պիտի մնայ, ուահեան, ուահեայ։ Այդ բար-
բարուսներն պէտք է խապառ արտաքսուին
այն երկիրներէն որոնք սեփական են Հա-
յին, Յոյնին, Ասորոց, այն ատեն միայն
Եւրոպայի Ազգերու միութիւնն իրակա-

նութիւն կրնայ դառնալ և խաղաղութիւնն
հաստատուն հիմունքներու վրայ դրուած։
Պարիս ժողոված պետերն պէտք է իրա-
ւունք և արդարութիւն լրիւ գործադրեն
փոքր ազգերու նկատմամբ, որով հակասած
չըլլան իրենց սկզբանց, պէտք է գիտենալ
հիմայ գործածել այդ երկսայրի սուրն,
ապա թէ ոչ իրենք ապագային կը վիրա-
ւորուին, զղջումն շատ ուշ և անօգուտ
կ'ըլլայ։ Իւլամ աշխարհը մօտ երեքհարիւր
միլիոն, սպառնացող վտանգ մ'է։ թանձր
է այսօր երկրիս կեղեին պէս, սակայն
կամաց կամաց կը ծծէ նոր ընկերվարա-
կան կամ բոլշևիկեան գաղափարներն և
օր մը յանկարծ մեծ հրաբուխ մը կը
պայթի ժողովականներու հայրենեաց գըլ-
խուն, սոսկալի և վայրենի հուրն կրնայ
ջնջել և հաւասարեցնել անոնց քաղա-
քակրթութիւնն ալ հին աշխարհի աւե-
րակներուն։ Եզիպտոսի շարժումներն նա-
խագիտակ մ'է զայրագոյն խժդութեանց։

Պարիսու վեհաժողի դիւանախօսերն
իւրաքանչիւրն միայն իրենց ազգային շա-
հերն պաշտպանեցին, իրենց հայրենիքի
սահմաններն ապահովել ուղեցին. այս շա-
հախնդրութեամբ՝ միայն Եւրոպացի փոքր

ազգերու գատը պաշտպանեցին. իսկ արևե-
լեան փոքր ազգերու նկատմամբ նոյն սա-
կարգութիւնը տեղի կ'ունենան ինչ որ
1914ի օգոստոսէն առաջ՝ գրուած էին րդրի
կտորներու վրայ։ Իբրև թէ յառաջաւոր
Ասման կարեւութիւն մը չունենայ Եւրո-
պայի ապահովութեան և խաղաղութեան
համար։ Այն ազգութիւններն ալ ունին իրենց
Ալզաս և Լորէն, Տրէնտօն և Տրիէտան։ Եթէ
Ուիլսոննեան 14 կէտերն, Ազգերու ընկե-
րակցութեան, և ազատորէն տնօրինելու
խօսութենքն, այսօր չսկսին ի գործ
դրուիլ, իրաւունք և Արդարութիւն կո-
չուած ճշմարտութիւնն, նոյն արձէցն
պիտի ունենան ինչ որ շնական սառնու-
թեամբ ասաց Բեթման Հոլվէկ. « Դաշ-
նագիրներն կը գործին զտկարներն խարե-
լու համար »։ Կը սիրենք յուսալ որ ի-
րաւունք և Արդարութիւն պաշտպանող-
ներն այդ նախատական քողով չծածկեն
Համաշխարհի խաղաղութեան դաշինքներն։

Քամզի հին ուրուականն դեռ կը սպառնայ։

Խաղաղութիւն կնքող Դաշնակից Պե-
տութիւններն զբաղած իրենց բնական և

ռազմագիտական պաշտպանութեան կէտեր փնտոելու և միայն իրենց ազգի ազատութիւնն ապահովելու, միւս կողմանէ անտես կ'առնեն Ազգերու ընկերակցութեան համար ալ փնտոելու բնական և ռազմագիտական պաշտպանութեան կէտն կամ թէ ասենք ընդհանրութեան կեղրոնն :

Պէտք չէ մոռնալ թէ ինչպէս հին Հռովմայեցիք միայն, հիւսիսի ազգերու անընդհատ յարձակումներն կրելուն համար կոչեցին « Բոլը մարդկութեան ». Officina gentium. նոյն հիւսիսի աշխարհն այսօր ևս սպառնալիք մ'է դաշնակից երկիրներուն : Խակ այժմու Եւրոպան գործ ունի նաև բոլոր Աֆրիկէի և Մեծն Ասիոյ հետ, յորս կը կոին և կը կոփուին անսպառ և անհատնում մարդկանց սերունդներ, ասոնք վաղը ահաւոր սպառնալիք և սարսափ կրնան ազդել Սառոփի և Ֆիումէի խնդիրներով զբաղողներուն և կրնան թիգունքն հարուածել զԱլբիոնն որ ծովերու տիրապետութեամբ կը խնդայ : Հիւսիսի աշխարհներէն սկսած հարաւ և արեմուտք կիսաւլուսին մը կը կազմեն իննը հարիւր միլիոն ժողովուրդներէ, որոնք կրնան վաղը ասել Ասիան-ասիացոց ինչպէս Եւրոպան

Եւրոպացոց, ինչպէս Ամերիկան - ամերիկացոց. և ընդունուած սկզբունք մ'է : Այս ատեն Գերմանիան, այդ ահաւոր և անըսպառ կազմակերպող ոյժն՝ պիտի բարձրացընէ իւր երկաթի բռունցքն . ով պիտի եւրաշխաւորէ Գաղղիոյ իւր ազատութիւնն եւ կը հասնի այն վայրկեանը որ ամեն զինուոր ասէ . Ով կընայ ազատիլ, թող ազատի : Այս գժրազդ օրը երբէք մենք չենք կամենար Եւրոպային, վասն զի անոր անկումն, մահ է ըոլոր արենելքի փոքր քրիստոնեայ ազգերուն : Ասոր համար Նախախնամութիւնն, որ աներենոյթ ձեռքով կը վարէ աշխարհիս տեսչութիւնն, բնական և անմատչելի երկիր մը, ռազմագիտական ամէն յարմարութիւններով, հաստատեր է, Հայաստանի բարձրաւանդակն, չորս ծովերու մէջ տեղն, և շուրջ պաշարեր է անառիկ պատնէշներով, բարձրաբերձ լերանց շղթայներով, խորանդունդ ծորերով, սրբնթաց գետերով, և ուղեղ սառեցնող ցրտով և ձիւնով : Նա է բնական Դղեակ մը անպարտելի, և պէտք է վերակազմել և զինել : Անյաղթելի ընելու համար պէտք է թուրք տարրեն մաքրել, որ ինչպէս ըսինք անընդունակ է քա-

դաքակրթութեան։ Թուրքացած Հայերն և
Յոյներն կը խոստանան վերադառնալ ի-
րենց քրիստոնէական կրօնքին, երբ ուժեղ
քրիստոնեայ Պետութիւն մը պաշտպանէ
ընդ միշտ, Թուրքի երկիւղէն և վրէժմիւն-
դրութենէն։ Պէտք է դաշնակիցներն օգնեն
տնտեսապէս վնասուած և խորտակուած
հայերու վերադարձին ի հայրենիս. եր-
կիրք պէտք ունի շինութեան։ Եւրոպան
իւր իսկ տնտեսական, քաղաքական և
ուազմական շահերու համար պէտք է Հա-
յաստանը իւր նախկին սահմաններու մէջ
նորոգէ, այդ Դղեակի դռներն բանալով ծո-
վերու վրայ, ուսկից ի հարկին կարենայ
մուտ և ել ունենալ։

Հայ ցեղի անսպառ կենսունակութիւնն։

Անհիմն է անոնց երկիւղն որ՝ երեք կամ
չորս միլիոն հայն՝ կը համարին գաղանա-
կուր ըլլալ Մ'եծ Հայաստանի անմարդաբը-
նակ երկրի մէջ. անոնք չեն գիտեր հայ
ցեղի աճելու հաշիւն։ Հայի թշնամիներն
և զրպարտողներն մինչև ցարդ ներկայա-
ցուցեր են Հայ ազգը՝ վաճառական, վաշ-
խառու, խանութպան։ Թուրքի բարեկամ-

ներն կազմած են այդ ազգագրական աշ-
խարհագիրն, թեթևեցնելու մեր ջարդա-
բարներու ոճիրներն. Պիէր Լօթի, զար-
տուղութիւն չի կազմեր։ Մինչդեռ Հայ
ազգն 90% երկրագործ է և իւր հողի
մէջ ցանած սերմին պէս, ինքն ալ բեղմա-
ւոր է։ Տուէր իրեն խաղաղ կեանք և հող,
ապահովեցէր անոր կեանքն և պատիւն,
զինքն ու ստացուածքն, և կը տեսնաք՝ է
որ երեսնաւոր, է որ վաթսնաւոր կ'աճին
և կը բազմանան։ Մինչև ցարդ՝ Հայաս-
տանի բարեկեցիկ ընտանիքներէն շատերն,
մէկ տան և յարկի տակ, ապրած են երե-
սուն, քառասուն և վաթսուն հոգիք։ Նա-
հապետական կենցաղն իւր գեղեցկութեամբ
Հայ վառարաններու շուրջն կը փայլի։

Դեռ ևս անցեալ դարու սկիզբներն, ոռւ-
սական տերապետութեան տակ, հազիւ
տասնեակ հազար Հայ կար հոն, ուր այժմ
զրաւած է Այրարատեան Հանրապետու-
թիւնն, 1830ին երկու մեծ գաղթականու-
թիւնք եկան. Պարսկաստանէն՝ 40 հազար,
իսկ Կարինէն՝ 60 հազար, ասով Հայոց
թիւն հասաւ, եթէ չեմ սխալիր, մօտա-
ւորապէս հարիւր հազարի։ Արդ հազիւ
մի դարու ընթացքի մէջ արդէն 1914 զի-

կայսերը, որոնք բաժնեցին և տկարացուցին զՀայաստան, որով աղէտալի եղաւ ոչ միայն մեզի, այլ իրենց և բոլոր մարդկութեան: Աթէնքի և Հռովմի փառքի ժառանգներն պէտքէ այդ դաշն վերանորոգեն: «Թուրքի տէրութիւնն՝ դաւաճան զերադրա պէս բռնակալական, վայրենի, բարբարոս, գաղանաբարոյ, մարդկութեան յաւիտենանական նախատինք, անհամեմատ աւելի տաելի քան անոնց դաշնակից Բօշիրն, Բարբարոսներն, որոց նմանն չի միշեր պատմութիւն, Անթիկակելի է, Զնջելի է» գոռացին Գաղղիական և Անզիական Պետական և լրագիրներն երբոր Թուրքնիրենց դէմ պատերազմի մուաւ, զրաւեց ստացուածները, ապականեց դպրոցները, պղծեց եկեղեցիները, կալանաւորեց ապառ քաղաքացիները, սովամահ տանջեց և ըսպաննեց զերիները. ևայլն ևայլն: Պէտք է ուրեմն հետեւիլ Սպանիոյ օրինակին և դուրս վարել զանոնք քրիստոնէից երկիրներէն: Ուրիշ միջոց չկայ քաղցկեղ մարմինն ողջնցնելու, սրագործութեան պէտք է դիմել: Այս է միակ միջոցը վերջնականապէս լուծելու Արևելեան հարցը:

Հասած է վճռական ժամն:

Նուորակոչին, Հայ ազգաբնակութիւնն 1,800,000ի կը հասնէր: Այս համեմատութեամբ եթէ այսօր Հայաստանն ամբողջ տրուի երեք միլիոն հայերու, մի դար յետոյ մօտ 25 միլիոն պատկառելիթիւ մը պիտի կազմեն, կրկնապատկուելով 25 տարին անգամ մը: Երբ ուրեմն հարկն ստիպէ զէնքի դիմել բարբարոսներու յարձակումներու դէմ, մարդասէր Եւրոպանիւր պատրաստած Դղեկի մէջ պիտի ունենայ կազմ և պատրաստ երկու միլիոն և կէս այնպիսի զինուորներ, որոց նախափորձն առին կովկասեան և Հարարայի ճակատներու վրայ:

Պէտք չէ Մոռնալ:

Հայաստանը կապեց Եւրոպայի հետ Աղեքսանդր Մեծն, յունական զարգացումն պատուաստուեցաւ հայ մտքի վրայ, և դարձաւ քաղաքակրթութեան յառաջամարտիկը արիական ազնիւցեղերուն: Հռովմայեցիք ամրապնդեցին Հայոց բարեկամութիւնն, Օգոստոս և Գերմանիկոս դաշնակից հրատարակեցին զՀայերն. միայն զարտուղութիւն կազմեցին Բիւղանդական

Օ՞ն անդր ի բաց հայկեան հողոյ հըսկաւագանց

[իւ սըրբոց]

Ի բաց ջոլիր չըւառական թուրքասէրիցըն պըղ-

[ծող .

Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ ,

Արիւնք վըկայից զնապաղիսն անժամ .

Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ ,

Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ :

Թող չվախենան թուրքասէր դրամա-

տէրերն և շահագործողներն՝ մտաւորա-

պէս և հոգեպէս և բարոյապէս սնանկա-

ցած թուրքերու անհետանալէն : Հինգ միւ-

լիառ պարտքի շահեր վճարողներն եղած

են Հայերն և Յոյներն . դարձեալ պարարտ

կաթ և իւղ մատակարարել կը խոստա-

նան նոյն ճարտար և ճարպիկ վաճառա-

կաններն , եթէ Պարիսու վեհաժողովն Հայե-

րուն և Յոյներուն հաստատէ և յանձնէ

իրենց բնաշխարհն , պատմական և ազգա-

գրական հայրենիքն Ազատ և Անկախ :

Դա պիտի լինի իսկապէս իրաւունքի

և Արդարութեան գլուխ գործոցն և Դաշ-

նակից չորս մեծ ազգերու , մեծ յաղթա-

նակի փառքի պսակին լուսաճաճանչ ա-

կունքներէն մին :

45000

ՀՀ Ազգային գրադարան



NL2118998

ՀՀ Ազգային գրադարան



NL2118995

I

2029

I

2030